

ՄԱՐԶԻԿ

ՀԱՅԿ

مارزیک

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԶ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 9 (303) VOL. XXVI N° 9

السنة السادسة والعشرون العدد التاسع

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԸ





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի 9րդ Պատգամաւորական ժողովը 22 Սեպտեմբերին Ծաղկազորի մէջ Հայաստան, աւարտեց իր աշխատանքները միութեան յառաջիկայ քառամեակին համար մշակելով գործունէութեան ընդհանուր ուղեցոյց:

Պատգամաւորական ժողովին մասնակցեցան միութեան կազմակերպական 26 շրջաններէն 23ը եւ Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան ներկայացուցիչը, ընդամենը՝ 70 պատգամաւոր:

Հնգօրեայ նիստերու ընթացքին ժողովը հանգամանօրէն քննեց միութեան անցնող չորս տարիներուն իրագործած կազմակերպական, սկաուտական, մարզական աշխատանքները եւ համապատասխան ծրագիրներ առաջարկեց յառաջիկայի համար: Ժողովը մեծապէս ողջունեց նախորդ չորս տարիներու «Կազմակերպչական քառամեակ»ի աշխատանքներուն արդիւնատրուներ եւ իր գնահատանքը արձանագրեց: Յարկապէս զովելի գլխու նոր մասնաճիւղերու սրելծումն ու կազմալոյծ մասնաճիւղերու վերաշխուծացումը:

Սկաուտական մարզին մէջ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ բանակումը, Միջին Արեւելքի խմբապետական համագումարը, Տէր Զօրի ուխտագնացութիւնը եւ Լոնդոնի սկաուտական համաշխարհային մամուլորին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մասնակցութիւնը եղան քննարկումներու գլխաւոր նիւթերը:

Մարզական բաժինը լայնօրէն քննեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն, համահայկական խաղերուն եւ նոր մարզախաղերու որդեգրման կապուած հարցեր:

Ժողովը զոհունակութեամբ ընդունեց այսուհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական եւ մարզական բոլոր հաւաքներուն լիիրաւ հանգամանքով մասնակցելու Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան պատրաստակամութիւնը:

Ժողովը լայն քննութեան արժանացուց նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հզօրացման անհրաժեշտութիւնը՝ յարկապէս շեշտելով Հայաստան-Սփիւռք բոլոր մասնաճիւղերու կապերու սերտացման վրայ:

Պատգամաւորական ժողովը վերամշակեց միութեան կանոնագիրը եւ առաջարկեց կազմութիւնը յանձնախումբի մը, որ պիտի մշակէ միութեան յառաջիկայ 10 տարիներու գործունէութեան հեռանկարները՝ նկատի ունենալով հայ կեանքի ներկայ պայմանները եւ միութեան դիմագրաւած մարտահրաւերները:

Ժողովի աւարտին ընտրուեցաւ յառաջիկայ քառամեակի նոր Կեդրոնական Վարչութիւնը, բաղկացած հետեւեալ անդամներէն՝ Գրիգորիս Պողարեան, Կարպիս Գալսասագալեան, Միհրան Շիմշիբեան (Լիբանան), Յարութիւն Յարութիւնեան (Հայաստան), Գօգօ Պալեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ), Վահրամ Գանիէլեան (Արեւելեան Միացեալ Նահանգներ), Արմէն Կէրիկեան (Գանապա), Հրաչ Միսեռեան (Ֆրանսա) եւ Գարլոս Սէֆերեան (Հարաւային Ամերիկա):

ՊԱՏՉԱՍԱԴՈՐԱԿԱՆ 9ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳԻՒՆՆ

Ծաղկազոր, 23 Սեպտեմբեր 2007



Թիւիւն հիւժերը

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
مارزیک مجلّة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



3

Հ.Մ.Բ.Մ. ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Յուշեր 12
- Մասնահիւղէ Մասնահիւղ 15
- Մեր Կորուստները 36

ԲԱԺԻՆՆԵՐ

- Համահայկական Խաղեր 3
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



15

«ՄԱՐԶԻԿ» ԿԸ ՎԵՐԱԳԱՌՆԱՅ ԱՄՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԻՐ ԿՇՈՒՅԹԻՆ

Մէկուկէս տարի, ակամայ, երկամսեայ դրութեամբ լոյս տեսնելէ ետք, Հ.Մ.Բ.Մ.ի 9րդ Պատգամաւորական Ժողովին որոշումով «Մարզիկ» կը վերադառնայ ամսական իր հրատարակութեան կշռոյթին, նոր թափով ու ծրագիրներով շարունակելու համար իր երթը:

Միամսեայ դրութեան վերադարձով եւ նիւթերու առատութիւնը նկատի ունենալով, թերթին այս թիւը կը յատկացուի Պատգամաւորական Ժողովէն առաջ տեղի ունեցած իրադարձութիւններուն, Պատգամաւորական Ժողովին անդրադարձը վերապահելով յաջորդ թիւին:

«Մարզիկ», որ մինչ այդ միութեան կայք էջով (www.homenetmen.org) կը ներկայացուէր միայն PDFի դրութեամբ, այսուհետեւ ընթերցողներուն պիտի տրամադրուի նաեւ առանձին նիւթերու ձեւով:

Մարզական անսաթերթ
Հրատարակութիւն՝ Հ.Մ.Բ.Մ.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԻՉ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 9 (303)

ԽՄԲԱԳԻՐ
Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻ
Արօ Մոսիկեան
Գօգօ Մկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
Տոքթ. Միսաք Արզումանեան, Կարպիս
Գուլումճեան, Սայրի Լատոյեան եւ
շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Զարեհ Չօրէքճեան
Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
Colour Separation - Photogravure Paklayan
Կողմի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՅԷ
Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 01/248043, Fax: 01/260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին հատավաճառի
սակն է 3000 լ.ն.: Տարեկան
բաժանորդագրութեան սակ ճշդուած է
35000 լ.ն.:

Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Բ.Մ.ի Մէկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:
Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ
(Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
եւ Եւրոպական երկիրներ \$50,
Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԵՐԿՐԱՆՈՒ
ԿԵՆՏՐՈՆ

ՃԱՆՉՆԱՎ

Մեր շուրջը ապրող ժողովուրդները ճանչնալը անհրաժեշտություն մըն է, անկասկած: Ճանչնալ կը նշանակէ հասկնալ եւ գնահատել: Իրական ճանաչողութենէ կը բխի արդիւնաւոր գործակցութիւն, որուն կը ձգտին բոլոր՝ ժողովուրդները, սկստական, մարպական, ընկերային թէ մշակութային բոլոր՝ կազմակերպութիւնները, որոնց նպատակը ուրիշ քան չէ եթէ ոչ՝ չիրար ճանչնալով կասու հաղորդակցութիւն ստեղծել իրարու միջեւ, միասնաբար դիմագրաւելու համար ժամանակին հետ մեծցող մարտահրաւերները:

Այլ ժողովուրդներ ճանչնալու կողքին, անհատի մը համար, սակայն, շատ աւելի կենսական պահանջ է ճանչնալ նախ ի՛ր ժողովուրդը, որուն մէկ անդամն է ան եւ որուն կը պարտի իր գոյութիւնը:

Շատերու համար նման հաստատում մը կրնայ անտեղի թուիլ, որովհետեւ շատ բնական է որ մարդ ճանչնայ իր ժողովուրդը, քանի հարապատ ծնունդն է անոր: Անբնականը հակառակն է, որ սակայն օրէ օր աւելի զգալի կը դառնայ: Որքա՛ն հայեր կան, որոնք իրենց անուն-մականունով, մինչեւ իսկ իրենց լեզուով եւ զգացումներով հայ են, բայց շատ քիչ կը ճանչնան հայութիւնը:

Չի բաւեր ծագումով ժողովուրդի մը պատկանիլ, անոր մասին ընդհանուր տեղեկութիւններ ունենալ, քանի մը անուններ եւ թուականներ գիտնալ: Ժողովուրդ մը իր անցեալով ու ներկայով ճանչնալու համար պէտք է շաղիլ, միախառնուիլ անոր հետ, պէտք է հոգի եւ արիւն դարձնել անոր ապրումները, ձգտումները, դժուարութիւններն ու յաջողութիւնները: Իսկ այդ բոլորը առաւելաբար կրթութեամբ

կարելի է, ազգայի՛ն կրթութեամբ: Ժողովուրդի մը պատմութեան եւ մշակութային արժէքներու տեսական ուսմունքը, կրթութիւնը, նախապայմանը կը կազմէ զայն ճանչնալու գործին, սակայն առանձինն ան բաւարար չէ: Կրթութիւնը հական հիմնաքար մը ըլլալով հանդերձ, որուն վրայ պիտի բարձրանայ անհատի մը ազգային գիտակցութեան լրիւ շէնքը, ամէն քան չի նշանակել ժողովուրդ մը ճանչնալու իմաստով: Նոյնքան եւ աւելի կարեւոր է կենդանի շփումը զանգուածներու հետ:

Հեռուէ հեռու կապը անհատի մը առիթ չի տար ծանօթանալու իր ժողովուրդի իսկական դիմագիծին, ուժին եւ տոկունութեան աղբիւրներուն: Մինչդեռ անմիջական շփումը, առօրեայ կեանքի խօսուն օրինակներով, կը ներկայացնէ այդ բոլորը ճանչնալու մեծ պատեհութիւնը:

Ժողովուրդ մը լաւ ճանչնալ կը նշանակէ հաւատք ու վստահութիւն ունենալ անոր վրայ: Մանաւանդ անոնք, որոնք կոչումը ունին ժողովուրդ մը ղեկավարելու, պարտաւոր են կենդանի շփումներով եւ անձնական փորձառութեամբ իրենց դատումները հասցընել կատարեալ համոզումի, որովհետեւ կեանքի մէջ չկայ աւելի մեծ ու դրական ուժ, քան այն հաւատքը, որ համոզումէն կը բխի:

Մտնել ժողովուրդին մէջ, բաժնել անոր տագնապներն ու ուրախութիւնները, դեր ստանձնել անոր հաւաքական կեանքին մէջ, մասնակից դառնալ անոր ազգային կերտումին.- ա՛յս է միակ ճամբան ժողովուրդէն չկտրուելու եւ անոր թերութիւններուն հետ առաւելութիւններն ալ անձնապէս հաստատելու համար: Կարձ՝

Ճանչնա՛լ ժողովուրդը:
Ճանչնա՛լ, սիրել եւ նուիրուիլ անոր:
Ճանաչողութիւնը այս ձեւով միայն ամբողջական եւ համոզիչ կ'ըլլայ:



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՄԱՐԶԱԽՍԱՂԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԿԵՆԴԱՑՆԵՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԸ

- ԵՐԵՒԱՆ, ԱԲՈՎԵԱՆ, ԱՐԱՐԱՏ, ԱՇՏԱՐԱԿ ԵՒ ԱՐՏԱՇԱՏ ԿԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԵՆ ԱՇԽԱՐՀԻ 94 ՔԱՂԱՔՆԵՐԷ 2500 ՄԱՐԶԻԿ-ՄԱՐԶԻԿՈՒՀԻՆԵՐՈՒ ՄՐՑՈՒՄՆԵՐ
- 77 ՄԵՏԱԼՆԵՐՈՒ ՀՈՒՆՁՔՈՎ ԵՐԵՒԱՆ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՄԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ
- ՍՓԻՒՌՔԵԱՆ 12 ՔԱՂԱՔՆԵՐ Կ'ԱՊԱՀՈՎԵՆ 31 ՄԵՏԱԼՆԵՐ
- Հ.Մ.Ը.Մ. ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԷ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԵՒ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ
- Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՀՐԱՉ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ԿՈՂՄԷ



18 -25 Օգոստոս 2007ին, Հայրենիքը վերակենդանացուց Նախասարդեան հին օրերու փառքը, համահայկական չորրորդ մարզախաղերու կազմակերպութեամբ: Մարզախաղեր, որոնք մարզական մրցակցութենէ աւելի աշխարհասփիռ հայերի սարդութեան արուեստը իրարու ծանօթանալու, հայրենիքը մօտէն ճանչնալու եւ Հայրենիք Սփիռք կապերը ամրապնդելու ոսկէ առիթը:



Ութ օրերու տեւողութեամբ, աշխարհի 94 քաղաքներէ 2500 մարզիկներ մրցեցան Երեւանի, Աբովեանի, Արարատի, Աշտարակի եւ Արտաշատի մարզադաշտերուն վրայ, յաղթեցին, պարտուեցան, եւ բոլոր պարագաներու աւելի հայացած ու հայրենիքին կապուած վերադարձան իրենց տուները:

Մարզախաղերու հանդիսաւոր բացումը պետական շուքով եւ ազգային մեծ սօնախմբութեամբ տեղի ունեցաւ «Վազգէն Սարգսեան»ի անուան մարզադաշտին մէջ, ուր մասնակիցները ողջունեց Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան, նշելով թէ խաղերը կը խորհրդանշեն համազգային միասնականութեան, Հայաստանի եւ Սփիւռքի մարզական սօնը: Մարզախաղերու ջանք վառեց Պարսեղոնայի ողիմպիականի (1992) խոյեան, հրաձիգ Հրաչեայ Պետրիկեան: Տեղի ունեցաւ շքեղ հրավառութիւն, ներկայացուեցաւ երգ-երաժիշտութիւն՝ հաճելի մթնոլորտի մէջ:

Մրցումներու ընդհանուր դասաւորման առաջին երեք դիրքերը գրաւող Երեւանի, Վանաձորի եւ Գիւմրիի մարզիկները կը նշանակեն մետալներու շուրջ 60 առ հարիւրը (168 մետալներէն 100ը): Մայրաքաղաք Երեւանը, առանձինն, իւրեք 77 մետալ՝ 36 ոսկի, 22 արծաթ եւ 19 պրոնզ:

Ընդհանուր առմամբ մարզախաղերը անցան մրցակցութեան առողջ մթնոլորտի մէջ, առանց նկատի ունենալու Պոլիս-Ստեփանակերտ Ֆուլթպոլի աւարտական մրցումին եւ Երեւան-Գաւիթի պասքեթպոլի տղոց խաղին պատահած տհաճ միջադէպերը:

Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները պատուով ներկայացուցին իրենց քաղաքները:

Կլէնտէյլի Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղը խաղերուն ներկայացաւ 80 հոգինոց պատուիրակութեամբ մը եւ իւրեք 3 արծաթ (պասքեթպոլ տղաք ու աղջիկներ, վոլիպոլ տղաք) եւ 1 պրոնզ մետալ (փինկ-փոնկ): Պէյրութէն Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Մարիանա Սահակեան փինկ-փոնկի աղջկանց մրցումներուն իւրեք 1 արծաթ եւ 1 պրոնզ մետալներ:

Այլապէս, սփիւռքեան 12 քաղաքներ ապահովեցին 31 մետալներ: Թեհրան տիրացաւ ութ մետալի, Կլէնտէյլ՝ վեց մետալի, Քիւե, Սոֆիա եւ Պոլիս երեքական մետալի, Պէյրութ երկու մետալի, իսկ Մոսկուա, Սոչի, Սպահան, Փլովտիվ, Փառնաուլ եւ Սիանի մէկական մետալի: Շատ աւելին կը սպասուէր Մոսկուայէն, որ այս մարզախաղերուն մասնակցեցաւ 5 հոգինոց պատուիրակութեամբ մը միայն: Նախորդ մարզախաղերուն Մոսկուայի մարզիկ-մարզիկուհիները 21 մետալով հանդիսացած էին ընդհանուր դասաւորման երկրորդ:





Հարկ է նշել, որ Լոս Անճելեսի վոլի-պոլի տղոց խումբը արժանացավ «Արդար խաղ»ի մրցանակին, Գահիրէի պասքեթպոլի տղոց խումբը՝ «Մարգական ոգիի եւ տոկունութեան» մրցանակին, իսկ Պոլսոյ պատուիրակութիւնը նկատուեցաւ Սփիւռքի «Լաւագոյն մարզական պատուիրակութիւնը»: Խաղերու զեղուհի ընտրուեցաւ թենիսի երեւանցի մարզիկուհի Գայիանէ Թունեան:

Փակման հանդիսութեան, որ տեղի ունեցաւ օփերայի դահլիճին մէջ, Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսեան պարգեւատրուեցաւ Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի պատուոյ շքանշանով: Նոյն առիթով, Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի նախագահ եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան յատուկ մետալներով պարգեւատրեց խաղերու պատմութեան մէջ իրենց կարեւոր ներդրումը ունեցած 7 հայորդիներ՝ մարմնամարզի

եւ երիտասարդութեան հարցերու նախարար Արմէն Գրիգորեան, Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահ Գազիկ Ծառուկեան, Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի փոխնախագահներ Ռոլանտ Շառոյեան եւ Հըրանդ Պարտազճեան (Թորոնթօ), Գործադիր Կոմիտէի անդամներ Կարի Բալայեան (Ստեփանակերտ), Ալֆրէտ Հաւան (Թեհրան) եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան (Մոնթրէալ):

Համահայկական չորրորդ խաղերուն վրայ վարագոյրը իջաւ 26 Օգոստոս 2007ին, չորս տարի ետք դարձեալ բարձրանալու համար՝ այս անգամ յաւելեալ մարզախաղերով (մարաթոն վազք, սուսերամարտ, պիչ վոլի, ձիարշաւ եւ այլն): Մինչ այդ նոր ժամադրութիւն տրուած է 2009ին, Ֆուլթոլի ու պասքեթպոլի համահայկական մրցաշարերով եւ շատ հաւանաբար նաեւ ձմեռնային մարզախաղերով:



Ստորեւ ընդհանուր ակնարկ՝ մարզախաղերու ընթացքին արձանագրուած արդիւնքներուն:

ՖՈՒԹՊՈՒ

Ֆուլթոլի խաղերուն մասնակցեցան 18 խումբեր, բաժնուած՝ 4 խմբակի: Բաժանումը եղաւ հետեւեալ ձեւով.-

- Ա. խմբակ - Տոնի Ռոստով, Պոլիս, Ֆրանքֆորթ, Ստեփանակերտ, Թիֆլիս:
 - Բ. խմբակ - Պէյրուս, Պուէնոս Այրէս, Նիկոսիա, Լոս Անճելլոս, Գիւմրի:
 - Գ. խմբակ - Սպահան, Ալմեյո, Երեւան, Պրիւքսէլ:
 - Դ. խմբակ - Փառնաուլ, Նինոծմինդա, Կլէնտէյլ, Թեհրան:
- Չորս խմբակներէն քառորդ աւարտականի փուլ անցան իւրաքանչիւր խմբակի առաջին երկու դիրքերը զբաղող խումբերը: Ա. խմբակէն՝ Պոլիս եւ Ստեփանակերտ, Բ. խմբակէն Պուէնոս Այրէս եւ Լոս Անճելլոս, Գ. խմբակէն



Սպահան եւ Երեւան, իսկ Դ. խմբակէն՝ Փառնաուլ եւ Կլէնտէյլ:

Ճակատումներու իբրեւ արդիւնք, կիսաւարտական փուլը հասան Պոլիս, Փառնաուլ, Ստեփանակերտ եւ Լոս Անճելըս: Պոլիս-Փառնաուլ խաղը աւարտեցաւ 1-0 արդիւնքով, իսկ Ստեփանակերտ-Լոս Անճելըս խաղը՝ 2-0 արդիւնքով: Հետեւաբար, աւարտականը իրարու դէմ հանեց Ա. խմբակի հօրազոյն խումբերը՝ Պոլիսն ու Ստեփանակերտը: Պոլիսը, որոնք Ա. հանգրուանի մրցումներուն 2-1 արդիւնքով յաղթած էին ստեփանակերտցիներուն, աւարտականին տեղի տուին Արցախի մայրաքաղաքի կազմին դէմ եւ 3-0 արդիւնքով կրեցին պարտութիւն մը:

Խաղերու վերջնական դասաւորումը պարզեց հետեւեալ պատկերը.-

1. Ստեփանակերտ
2. Պոլիս
3. Փառնաուլ
4. Լոս Անճելըս
5. Պոլէնոս Այրէս

Յայտնենք, որ համահայկական նախորդ խաղերուն Ֆուլթոնի առաջին երեք դիրքերը գրաւած էին Վէյլի, Մոսկոնա եւ Թեհրան:

ՄԵՆԻ ՅՈՒԹՊՈՒ

Համահայկական նախորդ խաղերուն նման, միևնի Ֆուլթոնի առաջնութիւնը այս անգամ եւս գնաց Երեւանի զօրաւոր կազմին, մինչ Վանաձորի խումբը հանդիսացաւ երկրորդ: Անցեալ խաղերուն երրորդ հանդիսացած Սան Փաուլոյի կազմը իր տեղը գիշեցաւ Թեհրանի:

Խաղերուն մասնակցեցան 18 խումբեր, 4 խմբակի բաժնուած:

Ա. խմբակ - Փարիզ, Պոլիս, Երոսադէմ, Մոնթրէալ, Վլադիմիր:

Բ. խմբակ - Երեւան, Մարսէյ, Թիֆլիս, Նինոսմիդա, Սան Փաուլո:

Գ. խմբակ - Պէյրուսթ, Գիւմրի, Վիեննա, Թեհրան:

Դ. խմբակ - Մանչեսթըր, Գամիշլի, Վանաձոր, Պոլէնոս Այրէս:

Քառորդ աւարտականի ճակատումները պարզեցին հետեւեալ արդիւնքները.-

Վլադիմիր - Գիւմրի 6-5

Երեւան - Պոլէնոս Այրէս 12-3

Թեհրան - Փարիզ 10-2

Վանաձոր - Սան Փաուլո 5-3

Կիսաւարտականին, Երեւանի խումբը յաղթեց Վլադիմիրի խումբին (11-5), իսկ Վանաձորի խումբը՝ Թեհրանի խումբին (10-5): Աւարտականը իրարու դէմ հանեց նախորդ խաղերու հօրազոյն երկու կազմերը (Երեւան, Վանաձոր) եւ արդիւնքը, նախորդին նման, եղաւ ի նպաստ Երեւանի՝ 6-2:

Ը ն դ հ ա ն ու ը դ ա ս ա լ ո ը ու մ ը պարզեց հետեւեալ պատկերը.-

1. Երեւան
2. Վանաձոր
3. Թեհրան
4. Վլադիմիր
5. Սան Փաուլո

ՊԱՍՔԵԹՊՈՒ

Պասքետպոլը եղաւ համահայկական խաղերուն ամէնէն աւելի ժողովրդակալութիւն ունեցող մարզախաղը: Տղոց մրցումներուն մասնակցեցան 21 խումբեր, բաժնուած 5 խմբակի, իսկ աղջկանց մրցումներուն՝ 11 խումբեր, բաժնուած 3 խմբակի:

Կլէնտէյլի տղոց խումբը չյաջողեցաւ պահել ախոյեանութեան իր տիտղոսը եւ այս խաղերուն հանդիսացաւ երկրորդ: Առաջնութիւնը իսկ Սոչիի անակնկալ կազմը: Աղջկանց մրցումներուն, Երեւանի եւ Կլէնտէյլի խումբերը պահեցին իրենց գերակայութիւնը եւ անգամ մը եւս հանդիսացան առաջին ու երկրորդ:

Մասնակցութեան պատկերը եղաւ հետեւեալ ձեւով: Տղոց խումբեր.-



Ա. խմբակ - Թեհրան, Ստեփանակերտ, Վիեննա, Լա Քրեսենթա:

Բ. խմբակ - Երեւան, Ժընեւ, Գահիրէ, Քիւն:

Գ. խմբակ - Կլէնտէյլ, Գիւմրի, Պոլիս, Մոնթրէալ:

Դ. խմբակ - Սոչի, Սպահան, Ախալքալաք, Լոնկ Պիչ:

Ե. խմբակ - Պէյրուսթ, Նիս, Թաւրիզ, Սիտնի, Տրեզնո:

Քառորդ աւարտականի փուլը հասան Թեհրան, Սիտնի, Տրեզնո, Սոչի, Կլէնտէյլ, Գահիրէ, Պոլիս եւ Ժընեւ: Կիսաւարտականին, Սոչիի խումբը յաղթեց Սիտնիի խումբին (68-59), իսկ Կլէնտէյլի խումբը՝ Ժընեւի խումբին (95-61): Հետեւաբար, աւարտականը իրարու դէմ հանեց Սոչիի եւ Կլէնտէյլի խումբերը: 76-61 արդիւնքով ախոյեանութեան տիտղոսին տիրացաւ Սոչիի խումբը:

Ընդհանուր դասաւորումը պարզեց հետեւեալ պատկերը.-



1. Սոչի
2. Կլենտոն
3. Սիտնի
4. Ժնև
5. Թեհրան

Աղջկանց մրցումներուն մասնակցեցան հետեւեալ խումբերը:-

- Ա. խմբակ - Կլենտոն, Գիւմրի, Վիեննա, Թեհրան:
- Բ. խմբակ - Ստեփանակերտ, Աթէնք, Թարիզ, Նիս:
- Գ. խմբակ - Երեւան, Թիֆլիս, Սպանան:

Ա. հանգրուանի մրցումներէն ետք, կիսաւարտական փուլ հասան Թեհրանի, Կլենտոնի, Երեւանի եւ Ստեփանակերտի խումբերը: Վճռական հանգրուանին, Կլենտոնի աղջիկները պարտութեան մատնեցին Թեհրանի խումբը (94-89), իսկ Երեւանի աղջիկները՝ Ստեփանակերտի խումբը (93-49): Աւարտականին, Երեւան 90-72 արդիւնքով պարտութեան մատնեց Կլենտոնի խումբը:

Ը ն դ հ ա ն ու ը դ ա ս ա լ ո ը ու մ ը եղաւ հետեւեալ ձեւով:-

1. Երեւան
2. Կլենտոն
3. Թեհրան
4. Ստեփանակերտ
5. Գիւմրի

ՎՈՒԹՊՈՒ

Վ ո լ ի պ ո լ ի մրցումներուն մասնակցեցան տղոց եւ աղջկանց տասական խումբեր, երկուքական խմբակներով: Տղոց մրցումներուն, ինչպէս միշտ, Երեւանի խումբը եղաւ անպարտելի: Աղջկանց պարագային, համահայկական առաջին եւ երկրորդ խաղերու ախոյեան Երեւանի խումբը իր վրէժը լուծեց Պոլսոյ խումբէն եւ վերատիրացաւ 2003ին կորանցուցած իր տիտղոսին:

Մասնակցութեան պատկերը եղաւ հետեւեալ ձեւով: Տղոց խումբեր:-

Ա. խմբակ - Երեւան, Նինոսմինդա, Ախալքալաք, Կլենտոն, Եղէգնաձոր, Վանաձոր:

Բ. խմբակ - Պոլիս, Թեհրան, Թիֆլիս, Լոս Անճելըս, Վիեննա:

Աղջկանց խումբեր:-

Ա. խմբակ - Պոլիս, Կլենտոն, Թիֆլիս, Թեհրան, Երեւան:

Բ. խմբակ - Սիւրիան, Պուլնոս Այրէս, Վիեննա, Արթիկ, Ստեփանակերտ:

Տղոց պարագային, կիսաւարտականի մրցումները իրարու դէմ հանեցին մէկ կողմէ Երեւանի եւ Պոլսոյ խումբերը (3-1), իսկ միւս կողմէ Կլենտոնի եւ Թեհրանի խումբերը (3-1): Աւարտականին, Երեւանի տղաքը 3-1 արդիւնքով պարտութեան մատնեցին Կլենտոնի խումբը:

Աղջկանց պարագային, կիսաւարտականի 4 խումբերէն 3ը եղան հայաստանեան կազմեր: Երեւան 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Արթիկը, իսկ Պոլիս՝ 3-2 արդիւնքով Սիւրիանը: Աւարտականին, Երեւան 3-0 արդիւնքով յաղթեց Պոլսոյ խումբին:

Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումները:-

♦ՏՂԱՔ	♦ԱՂՋԻԿՆԵՐ
1. Երեւան	1. Երեւան
2. Կլենտոն	2. Պոլիս
3. Պոլիս	3. Սիւրիան

ՃԱՏՐԱԿ

Ճատրակի մրցումներուն բացարձակ տիրապետութիւնը եղաւ հայրենի մարզիկ-մարզիկուհիներուն, որոնք այս խաղերուն եւս ներկայացան նոր անուններով: Յատկանշական է, որ համահայկական խաղերէն իւրաքանչիւրին կը յայտնուին նոր ախոյեան-ախոյեանուհիներ, որոնց մասնակցութիւնը սովորաբար կը սահմանափակուի համահայկական մէկ խաղերով միայն:

Ստորեւ՝ արդիւնքներուն ընդհանուր պատկերը:-

- ♦ՏՂԱՔ
- 1. Գոռ Վիրապեան (Նոր Հաճըն)
- 2. Տիգրան Գասպարեան (Երեւան)
- 3. Հայկ Մինասեան (Սիւրիան)

♦ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Տիանա Մնացականեան (Աբովեան)
- 2. Աննա Հայրապետեան (Երեւան)
- 3. Յասմիկ Ղամպարեան (Վանաձոր)

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

Փինկ-փոնկի մրցումներուն մասնակցեցան տղոց 6 եւ աղջկանց 8 խումբեր: Պէջրութէն Հ.Մ.Ը.Մ.ական Մարիանա Սահակեան եւ Կլենտոնի Ռոպէրթ Շահնազարի եղան միակ մարզիկները, որոնք մասամբ խախտեցին հայրենի մարզիկ-մարզիկուհիներու տիրապետութիւնը այս խաղերուն:

Արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը:-

- ♦ՏՂԱՔ
- 1. Սուրատ Սարգսեան (Գիւմրի)

2. Ալեքսանտր Տիրբեան (Ստեփանակերտ)

3. Ռոպէրթ Շահնազարի (Կլէնտէյլ)

♦ԶՈՅԳ ՏՂԱՔ

1. Ալեքսանտր Տիրբեան (Ստեփանակերտ) - Արշակ Յարութիւնեան (Երեւան)

2. Մեսրոպ Ղուկասեան (Երեւան) - Գարեգին Մկրտչեան (Երեւան)

3. Մուրատ Սարգսեան (Գիւմրի) - Գարեգին Շախոյեան (Գիւմրի)

♦ԽՄԲԱՅԻՆ

- 1. Գիւմրի
- 2. Երեւան
- 3. Ստեփանակերտ

♦ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Աննա Պողոսեան (Երեւան)
- 2. Մարիանա Սահակեան (Պէյրուիթ)
- 3. Լուիզա Նազարեան (Երեւան)

♦ԶՈՅԳ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Յասմիկ Մաթեոսեան (Երեւան) - Տաթև Ենգիպարեան (Երեւան)

2. Հեղինէ Յարութիւնեան (Վանաձոր) - Քրիստինէ Կարապետեան (Վանաձոր)

3. Աննա Պողոսեան (Երեւան) - Մարիանա Սահակեան (Պէյրուիթ)

♦ԽՄԲԱՅԻՆ

- 1. Երեւան
- 2. Ստեփանակերտ
- 3. Վանաձոր

ԹԵՆԻՍ

Թենիսի մրցումներուն մասնակցեցան 27 քաղաքներէ 67 տղաք եւ 27 աղջիկներ: Տղոց մասնակիցներու շարքին էր Համահայկական խաղերու փոխ նահագահ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան: Ախոյեաններն ու ախոյեանուհիները նոր անուններ էին, յայտնաբար առաջին անգամ մասնակցողներ: Անշուշտ, ինչպէս միշտ, տիրապետութիւնը եղաւ Երեւանի մարզիկ-մարզիկուհիներուն:

Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումները.-

♦ՏՂԱՔ

- 1. Յովհաննէս Դաւթեան (Երեւան)
- 2. Դաւիթ Մինասեան (Երեւան)
- 3. Խաչատուր Խաչատրեան (Երեւան)

♦ԶՈՅԳ ՏՂԱՔ

1. Յարութիւն Սարինգիւլեան (Երեւան) - Հենրիկ Նիկողոսեան (Երեւան)

2. Խաչատուր Խաչատրեան (Երեւան) - Արման Յարութիւնեան (Երեւան)

3. Աշոտ Մկրտչեան (Երեւան) - Արտակ Պաղտասարեան (Երեւան)

♦ԱՂՋԻԿՆԵՐ

- 1. Լուսինէ Դաւթեան (Երեւան)
- 2. Գայիանէ Թունեան (Երեւան)
- 3. Անի Ամիրաղեան (Երեւան)

♦ԶՈՅԳ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Լուսինէ Դաւթեան (Երեւան) - Անի Ամիրաղեան (Երեւան)

2. Գայիանէ Թունեան (Երեւան) - Անի Նազարեան (Թեհրան)

3. Քնքոյշ Ետիկարեան (Երեւան) - Նունէ Խաչատրեան (Երեւան)

ՊԱՏԻՆՈՒԸՆ

Պատմինթընի մրցումներուն մասնակցեցան 8 երկիրներէ 32 տղաք եւ 22 աղջիկներ: Թէեւ առաջնութեան տիրողները խլեցին Երեւանի մարզիկ-մարզիկուհիները, սակայն նկատուելի ներկայութիւն եղան նաեւ Պուլկարիոյ (Խասքովօ, Սոֆիա) մարզիկ-մարզիկուհիները: Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումները.-

♦ՏՂԱՔ

- 1. Հայկ Միսաքեան (Երեւան)
- 2. Սարգիս Յակոբեան (Խասքովօ)
- 3. Սպարտակ Ռսեան (Երեւան)

♦ԶՈՅԳ ՏՂԱՔ

1. Ռուբէն Պողոսեան (Երեւան) - Յարութիւն Պողոսեան (Երեւան)

2. Հայկ Միսաքեան (Երեւան) - Բիւզանդ Գասապեան (Սոֆիա)

3. Սպարտակ

Ռսեան (Երեւան) - Հրաչեայ Մնացականեան (Երեւան)

♦ԱՂՋԻԿՆԵՐ

1. Աննա Նազարեան (Երեւան)

2. Ռուզաննա Յակոբեան (Քիւե)

3. Մարիամ Համբարձումեան (Սոֆիա)

♦ԶՈՅԳ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Աննա Նազարեան (Երեւան) - Լաուրա Սամուէլեան (Երեւան)

2. Ռուզաննա Յակոբեան (Քիւե) - Մարիամ Համբարձումեան (Սոֆիա)

3. Վարդիթեո Պողոսեան (Իջևան) - Սեդա Պէկինեան (Իջևան)

ԼՈՂ

Լոզի 11 մրցումները իրենց շուրջ ստեղծեցին բաւական մեծ հետաքրքրութիւն: Միքայէլ Գոլոյեան անգամ մը եւս խօսիլ տուաւ իր մասին: Գոլոյեան, որ անցեալ խաղերուն տիրացած էր երկու ոսկի մետալի, այս խաղերուն արժանացաւ երեք ոսկի մետալի: Տղոց պարագային, յայտնութիւնը Սպահանէն Գամէլ Դիլանչեանն էր, որ տիրացաւ 5 արծաթ մետալի:

Աղջկանց մրցումներուն, նախորդ խաղերուն երկու ոսկի մետալի տիրացած Սոնա Սահակեան այս խաղերուն բացակայ էր: Ներկայ էր Վարդուհի Աւետիսեանը, որ 2003ին հաստատած էր համահայկական խաղերու երկու մրցանիչ: Այս խաղերուն թէեւ ան որեւէ մրցանիչ չհաստատեց, սակայն տիրացաւ երկու ոսկի մետալի: Նմանապէս, երկու առաջնութեան տիրացաւ Անա-



Հիտ Բարսեղեան: Տիրապետութիւնը դարձեալ եղաւ Երեւանի մարզիկ-մարզիկուհիներուն:

Ստորեւ մրցումներու թեքնիք արդիւնքները:-

◆50 Մ. ԱԶԱՏ

1. Յարուժիւն Յարուժիւնեան (Երեւան) 54" 06
2. Գամէլ Դիլանչեան (Սպահան) 25" 03
3. Վրդէն Մեսրոպովիչ (Փլովտիլ) 25" 10

◆100 Մ. ԱԶԱՏ

1. Միքայէլ Գորոյեան (Երեւան) 52" 50
2. Գամէլ Դիլանչեան (Սպահան) 54"56
3. Յարուժիւն Յարուժիւնեան (Երեւան) 54" 64

◆200 Մ. ԱԶԱՏ

1. Միքայէլ Գորոյեան (Երեւան) 1'57"06
2. Գամէլ Դիլանչեան (Սպահան) 2'22"66

3. Յարուժիւն Յարուժիւնեան (Երեւան) 2'2"93

◆50 Մ. ՊՐԱՍ

1. Վահէ Գաբրիէլեան (Մոսկոլա) 31" 41
2. Ալիք Ալիֆեան (Երեւան) 31"39
3. Հայկ Անանեան (Երեւան) 32"2

◆100 Մ. ՊՐԱՍ

1. Ալիք Ալիֆեան (Երեւան)
2. Գամէլ Դիլանչեան (Սպահան)
3. Հայկ Անանեան (Երեւան)

◆4 x 50 Մ.

1. Երեւան 1'39"35
2. Սպահան 1'52"69
3. Թեհրան 1'56"63

ԱՂՋԻԿՆԵՐ

◆50 Մ. ԱԶԱՏ

1. Անահիտ Բարսեղեան (Երեւան) 29"41
2. Յասմիկ Մովսիսեան (Երեւան) 31"15

3. Ալինա Ալեքսանտրեան (Սպահան) 33"66

◆100 Մ. ԱԶԱՏ

1. Անահիտ Բարսեղեան (Երեւան) 1'4"50
2. Յասմիկ Մովսիսեան (Երեւան) 1'9"12
3. Ալինա Ալեքսանտրեան (Սպահան) 1'14"75

◆50 Մ. ՊՐԱՍ

1. Վարդուհի Աւետիսեան (Երեւան) 36"38
2. Լուսիկ Ղուկասեան (Երեւան) 42"3
3. Վահէ Ղարախանեան (Թեհրան) 43"44

◆100 Մ. ՊՐԱՍ

1. Վարդուհի Աւետիսեան (Երեւան) 1'09"06

2. Լուսիկ Ղուկասեան (Երեւան) 1'10"87

3. Արմինէ Սարիբէկեան (Քիւե) 1'11"04

◆4 x 100 Մ.

1. Երեւան 2'8"12
2. Սպահան 2'6"07
3. Թեհրան 2'32"09

ԱՍԼԵԹԻՉՄ

Մարզախաղերու «Թագուհին»՝ աթլետիկոսները եղաւ համահայկական խաղերու մեծագոյն շահողը: Արդարեւ, 17 մրցումներու ընթացքին արձանագրուեցան 7 մրցանիչներ, չորսը տղոց կողմէ, իսկ երկուքը՝ աղջկանց:

Իբրեւ յայտնութիւն, աթլետիկոսի մրցումներուն գլխաւոր նորութիւնը եղաւ աշխարհի ամենէն արագ հայր՝ Ճոնի Տէր Եղիայեանը, Կլէնտէյլէն, որ խլիճ 100 եւ 200 մետր վազքի առաջնութեան տիտղոսները: Ան գահընկէց ըրաւ նախորդ խաղերու խոյեան Վահագն Ջաւախեանը, որ բաւականացաւ երկրորդութեան տիտղոսով: Տէր Եղիայեան 100 մետր վազքի մրցումին արձանագրեց 10"3 արդիւնք (նախորդ խաղերուն Ջաւախեան արձանագրած էր նոյն արդիւնքը), իսկ 200 մետր վազքի մրցումին՝ 22"1 արդիւնք (նախորդ խաղերուն Էտուին Ջաքարեան արձանագրած էր 22"2):

Տէր Եղիայեան Աւետարանական եկեղեցւոյ Նազարէթեան շարժումի Փաստօրինայի երիտասարդ քարոզիչն է: Մարզական իր մեծ իրազործումին համար ան շնորհակալագիրներ ստացաւ Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշէն, Քալիֆորնիոյ նահանգապետ Առնոլտ Շուարցշէկերէն եւ ամերիկեան հանրաժանութ բազմաթիւ դէմքերէ: Ան Պսակաւոր Արուեստից (BA) վկայականին տիրացած է եկեղեցական երաժշտութեան մէջ, իսկ մագիստրոս վկայականի՝ Աստուածաբանութեան մէջ:

Թեհրանէն Էտուարտ Մանկասարեան, որ նախորդ խաղերուն հաստատած էր 400 եւ 800 մետր վազքի մրցանիչներ, այս խաղերուն բարելաւեց 400 մետրի իր մրցանիչը: Արտաշատէն Արամ Դաւթեան, իր կարգին, հաստա-





Համահայկական խաղերու կոմիտեի նախագահ եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան եւ շքանշանակիր հայորդիներ:
Աջէն առաջինը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ
եղբ. Հրայ Տէր Սարգիսեան (մոնթրէալ):

տեց 800 մեթր վազքի նոր մրցանիշ:

Այլ մրցանիշ մըն ալ բարելաւուեցաւ տղոց դրօշարչաւի պարագային: Երեւանի խումբը 42՝5 արդիւնքով իր ետին ձգեց Վանաձորի խումբը, որ նախորդ խաղերուն 43՝0 արդիւնքով հաստատած էր մրցանիշ: Աղջկանց պարագային, Վանաձորի խումբը բարելաւեց իր նախկին մրցանիշը (50՝3) եւ արձանագրեց 50՝1 արդիւնք:

Գունտ նետերու մրցումներուն, անցեալ խաղերուն երկրորդ հանդիսացած Բենիկ Աբրահամեան, Թիֆլիսէն, այս խաղերուն ո՛չ միայն առաջին հանդիսացաւ, այլեւ՝ հաստատեց նոր մրցանիշ (15.76 մ.):

Աղջկանց պարագային, մրցանիշներ հաստատուեցան դրօշարչաւի եւ գունտ նետերու մրցումներուն: Հոս երկու Աննաներ իրենց վրայ հրաւիրեցին մարզասէրներու ուշադրութիւնը: Աննա Քոչինեան, որ իւրեց 1 ոսկի եւ 1 արծաթ մետալ 200 եւ 100 մեթր վազքի մրցումներուն, եւ Աննա Եգորեան, որ արժանացաւ 2 ոսկի եւ 1 արծաթ մետալի՝ 800 եւ 1500 մեթր վազքի եւ դրօշարչաւի մրցումներուն:

Ստորեւ մրցումներուն արդիւնքները՝ խաղերու մրցանիշներով (ԽՄ).-


◆ՏՂԱՔ

◆100 Մ. ՎԱԶՔ

1. Ճոնի Տէր Եղիայեան (Կլէնտէյլ) 10՝3
2. Վահագն Զաւախեան (Երեւան) 10՝4
3. Ալեքսանտր Աբրահամեան (Երեւան) 10՝6

◆200 Մ. ՎԱԶՔ

1. Ճոնի Տէր Եղիայեան (Կլէնտէյլ) 22՝1
2. Վահագն Զաւախեան (Երեւան) 22՝2
3. Ալեքսանտր Աբրահամեան (Երեւան) 22՝3



Աշխարհի ամէնէն արագ հայր՝ 100 եւ 200 մէթր վազքի ախոյեան Ճոնի Տէր Եղիայեան (Կլէնտէյլ):

◆400 Մ. ՎԱԶՔ

1. Էտուարտ Մանկասարեան (Թեհրան) 47՝9 ԽՄ
2. Արամ Դաւթեան (Արտաշատ) 48՝3
3. Էնրիկ Մկոյեան-Զիլպէրշայն (Ախալցխա) 49՝3

◆800 Մ. ՎԱԶՔ

1. Արամ Դաւթեան (Արտաշատ) 1՝55՝3 ԽՄ
2. Եղիշ Եարագեան (Երեւան) 1՝55՝5
3. Արմէն Սարեան (Ստեփանակերտ) 1՝56՝9

◆1500 Մ. ՎԱԶՔ

1. Գրգլա Մկոյեան-Զիլպէրշայն (Ախալցխա) 4՝
2. Աշոտ Յարութիւնեան (Ստեփանակերտ) 4՝00՝4
3. Արմէն Ասրեան (Ստեփանակերտ) 4՝05՝4

◆5000 Մ. ՎԱԶՔ

1. Սեւակ Եգիկեան (Գիւմրի) 15՝31՝1
2. Աշոտ Հայրապետեան (Ստեփանակերտ) 15՝43՝4
3. Գրգլա Մկոյեան-Զիլպէրշայն (Ախալցխա) 15՝49՝4

◆4 x 100 Մ. ԴՐՕՇԱՐՇԱԻ

1. Երեւան (Է. Սերոբեան, Ա. Անդրեասեան, Ա. Աբրահամեան, Վ. Զաւախեան) 42՝5 ԽՄ
2. Վանաձոր (Գ. Վարդանեան, Տ. Մանուկեան, Զ. Նազարեան, Ա. Սարգսսեան) 43՝6
3. Արտաշատ (Ա. Մխիթարեան, Կ. Յարութիւնեան, Ա. Դերմոյեան, Ա. Դաւթեան) 44՝0

ՄԵԿ ՔԱՅԼ ՈՍՏՈՒՄ

1. Արմէն Սարգսեան (Վանաձոր) 7.88 մ.
2. Արսէն Դերմոյեան (Արտաշատ) 7.32 մ.
3. Արտակ Համբարձումեան (Երեւան) 7.25 մ.

ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ

1. Բենիկ Աբրահամեան (Թիֆլիս) 15.76 մ. ԽՄ



- 2. Արամ Սահակեան (Երեւան) 14.30 մ.
- 3. Սօս Մելքիսէթեան (Աբովյեան) 14.16 մ.

ԱՂՋԻԿՆԵՐ

◆100 Մ. ՎԱՁՔ

- 1. Անի Խաչիկեան (Երեւան) 12"1
- 2. Աննա Քոչինեան (Վանաձոր) 12"2
- 3. Լիլիթ Մանուչարեան (Վանաձոր) 12"3

◆200 Մ. ՎԱՁՔ

- 1. Աննա Քոչինեան (Վանաձոր) 25"5
- 2. Լիլիթ Մանուչարեան (Վանաձոր) 26"0
- 3. Լիլիթ Յարութիւնեան (Գիւմրի) 26"2

◆400 Մ. ՎԱՁՔ

- 1. Գայրանէ Պուլղատարեան (Վանաձոր) 57"9
- 2. Ամալիա Շառոյեան (Երեւան) 58"4
- 3. Մարինէ Մուսայէլեան (Ստեփանակերտ) 1'00"5

◆800 Մ. ՎԱՁՔ

- 1. Աննա Եգորեան (Երեւան) 2'13"3
- 2. Գայրանէ Պուլղատարեան (Վանաձոր) 2'20"0
- 3. Գայրանէ Ուստեան (Ախալցխա) 2'22"0

◆1500 Մ. ՎԱՁՔ

- 1. Աննա Եգորեան (Երեւան) 4'55"1
- 2. Սաթինէ Պօղոսեան (Կապան) 5'06"0
- 3. Զարուհի Եգորեան (Երեւան) 5'06"2

◆4 x 100 Մ. ԴՐՕՇԱՐՇԱԻ

- 1. Վանաձոր (Ա. Յովհաննիսեան, Գ. Պուլղատարեան, Գ. Քոչինեան, Լ. Մանուչարեան) 50"1 ԽՄ

- 2. Երեւան (Ա. Եգորեան, Լ. Կարայեան, Ա. Շառոյեան, Ա. աչիկեան) 50"3

- 3. Գիւմրի (Ա. Պողոսեան, Լ. Յարութիւնեան, Ռ. Ներսիսեան, Ք. Յարութիւնեան) 51"5

ՄԵԿ ՔԱՅԼ ՈՍՏՈՒՄ

- 1. Հայկանուշ Բեգլարեան (Կապան) 5.67 մ.
- 2. Մարինէ Յարութիւնեան (Կապան) 5.55 մ.
- 3. Նադեժդա Զաքարեան (Վանաձոր) 5.36 մ.

ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ

- 1. Թաթիանա Սիմաշովա (Երեւան) 12.40 մ. ԽՄ



ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԶՈՐՐՈՐԴ ԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՒՈՐՈՒՄԸ

	ԸՆԴՀ.	ՈՍԿԻ	ԱՐԾԱԹ	ՊՐՈՆՉ
Երեւան	77	36	22	19
Վանաձոր	16	4	8	4
Գիւմրի	7	3	-	4
Ստեփանակերտ	10	2	4	4
Կլէստէյլ	6	2	3	1
Արտաշատ	4	1	2	1
Կապան	3	1	2	-
Թեհրան	8	1	1	6
Ախալցխա	4	1	-	3
Աբովյեան	2	1	-	1
Թիֆլիս	1	1	-	-
Մոսկուա	1	1	-	-
Նոր Զաճըլ	1	1	-	-
Սոչի	1	1	-	-
Սպահան	8	-	6	2
Քիել	3	-	2	1
Սոֆիա	3	-	2	1
Պոլիս	3	-	2	1
Պէյրուք	2	-	1	1
Խասըզլօ	1	-	1	-
Իջեւան	2	-	-	2
Սիսիան	2	-	-	2
Փլովտիվ	1	-	-	1
Փառնաուլ	1	-	-	1
Սիտնի	1	-	-	1

- 2. Հեղինէ Արզումանեան (Վանաձոր) 11.48 մ.
- 3. Էդնա Իսայեան (Թեհրան) 10.96 մ.

Նկարները՝ ՕԳՆԻԿ Գրիգորեանի եւ հայրենի լրատու գործակալութիւններու:

ԵԳԻՊՏԱՊԱՏՈՒՄ

Բ.

Տոքթ. Միսաք Արզումանեան* ՍԱՆ ԽՈՍԷ

Գիշերը, միութենական հաւաքոյթէ մը վերադարձին, գիշերապահ-դարպասապահէն ստացանք անակնկալ «բաց-նամակ»ը:

Առաւօտուն, ներկայացաւ խոստումնապահ եղբայրը եւ ամենայն ազնուութեամբ ներկայացուց քաղաքը ծանօթացընելու իր փափաքը՝ անմիջապէս ընելով երկու յայտնութիւն:

Ա. Որ ինք, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի անդամ եղած է ու Գահիրէի մէջ կը շարունակէ միութենական ակմբային ծառայութիւնը:

Բ. որ ատենին Պուրճ Համուտի Ազգային Աբգարեան վարժարան յաճախած է ու այնտեղ նախակրթարանի բաժնին մէջ անգլերէն լեզուի դասատու ունեցած է օրդ. Ժազիրն Պաստաճեանը, այսինքն՝ այդ հանդիպումին տեսակցութեան ներկայ տիկին Արզումանեանը:

Այս բացայայտումները բնականաբար ստեղծեցին մօտիկութեան հոգեվիճակ եւ ընթացք տուին համապատասխան հաճելի փոխասացութիւններու:

Ապա, եղբայր Փուշիկեանի հաճոյակատար առաջնորդութեամբ, որոշ ժամանակ տեւեց պատմա-աշխարհագրական ծանօթութիւններով մեզի հարստացնող շրջագայութիւնը, զոր աւարտեցինք բարձրանալով Գահիրէի Աշտարակը:

Այդ օր, բոլորովին աննախատեսելի տեսակցութիւն մը մեր յիշողութեան մէջ արձանագրուեցաւ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական վարք ու բարքի անակնկալ ու գովելի բացայայտումի մը հոգեսուն օր:

Այս բոլորին զուգահեռ, մարզական, միութենական, ակըմբային նախաձեռնութիւնները յաջորդեցին իրարու, ծրագրուած ամէնօրեայ հերթականութեամբ:

Պասքէթի մրցումներ, գաղութի ազգայիններուն հետ սրահային հանդիպումներ, եղբայրական ազգայներ, մանաւանդ այցելութիւն «Յուսաբեր»ի շէնքը, թերթին խմբագրա-



Սեպտ. 1977, Գահիրէ: Աղեքսանդրիոյ ծովափ, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի խումբին հետ: Ոտքի, ձախիմ՝ եղբ. Կարօ Գազանճեան, աջին՝ տոքթ. Միսաք Արզումանեան: Նստած՝ տիկիններ Ժազիրն Արզումանեան, Գարսէն Տէր Կարապետեան, եղբայրներ Վարդգէս Տէր Կարապետեան, Զաքար Զորպանեան եւ Վրէժ (*):

տունը, «Դալար» տանիքը, առաջնորդութեամբ եղբ. Սուրէն Պայրամեանին, այդ օրերու Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի ատենապետ եղբ. Վարուժան Գազանճեանին եւ Եգիպտոս մեր կեցութեան տեւողութեան մեր ուղեկիցն ու հոգատարը հանդիսացած վարչական եղբ. Էտուար Թումայեանցին:

Յիշելով «Յուսաբեր»ը, կարելի՞ է չմտաբերել այստեղ այն ժամանակները, երբ ան «Յառաջ»ի, «Հայրենիք»ի եւ Սփիւռքի գաղափարական մամուլի այլ անդամներուն հետ, յուսաբեր գրիչներով ազգային տեսիլքներ ցրլարձակեց եւ տարասփիւռ հայ ժողովուրդը մղեց իմացեալ նուիրումով ընթանալու հայրենասիրութեան, հայապահպանման ուղենիշ պարզած ու հայրենիք առաջնորդող հաւաստի ճամբաներէն:

«Յուսաբեր»ի խմբագրատունը եղաւ նաեւ այն վայրը, ուր մէջս արթնցան ազգային, քաղաքական, մտաւորական բարեփոխարարական դէմքերու անթառամ անուններ, որոնք հանգրուա-

նային կամ երկարատե կեցութեամբ «Յուսաբեր»ի հրապարակագրութեան փառքի օրերը կերտեցին, ինչպէս՝ Վահան Նաւասարդեան, Բենիամին Թաշեան եւ ուրիշներ, որոնք «Յուսաբեր»էն անկախ, Մայիսեան Հանրապետութեան կառուցումին մասնակից դառնալէ ետք՝ Սփիւռքի պարտադրած աստանդական կեանքի ընթացքին եղան քիչ մը ամէն տեղ, ի մասնաւորի նաեւ Եգիպտոս եւ հանրային, քաղաքական, մշակութային գործադաշտերու մէջ, իւրաքանչիւրը իր պատանդանը նուաճեց եւ դարձաւ բազմերախտ ու մեծանուն դէմք, ինչպէս՝ Նիկոլ Աղբալեան, Համօ Օհանջանեան, Լեւոն Շանթ, Գասպար Իփէկեան եւ փաղանգը հանրաճանաչ անկրկնելի սերունդին:

Նախատեսուած էր «Արարատ»ի վարչութեան հետ համախորհուրդ Աղեքսանդրիոյ քոյր մասնաճիւղին՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ին այցելել եւ այնտեղ եզրափակել Գահիրէի մէջ ըսկրսած մրցաշարքը:

Անձնական ինքնաշարժներով, հաճելի ուղեւորութեամբ մը հասանք Միջերկրականի ափին, Մեծն Աղեքսանդրի 331 թուին հիմնած եւ «Արեւելքի արուեստի ու գրականութեան կեդրոն» եղած, պատմական նաւահանգիստը՝ Աղեքսանդրիա:

Ուղղուեցանք ակումբ, եւ քիչ անց, մեր աչքերուն պատկերուեցաւ կարուած մը, պարտէզով, խողավայրով, շէնքով, որուն դարպասը «գրաւած» էին եղբայրները, գլխաւորութեամբ «Կամք»ի տարիներու տոհմապետ՝ եղբ. Վահան Գաւուքեանի: Եղբայրը ծանօթ էր ինձի, Լիբանանի մէջ տեղի ունեցած հանդիպումէ մը եւ, բնականաբար, մեր հանդիպումը եղաւ ջերմ:

Ճաշի ժամը հասած էր, առաջնորդուեցանք միութենապատկան պարտէզը, ուր տեղաւորուեցանք արդէն յարդարուած, երկար սեղանի մը շուրջ-բոլորը:

Ըստ սովորութեան, կերուխումը սկսաւ բարի գալուստի եւ ողջոյնի յաւուր պատշաճի խօսքերով: Պուրճ Համուտի վարչութեան խօսքը, եղբայր Զաքարի բաղձանքով, փոխանցուեցաւ դարձեալ ինձի եւ դարձաւ Լիբանանի շրջանի խօսք, որմէ կ'արձանագրեմ կարճ հատուած մը:

«Ըսուած է, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդութեան կենսունակութեան արտայայտութիւնն է ու գլխաւոր ոգի: Այսօր, ի՞նչպէս չաւելցնեմ որ Ան է նաեւ հայ ու առողջ ապրելու կամք: Կամք՝ մարմնամարզի ու սկաւառութեան երկրի աշխատանքներով հայ երիտասարդներուն միջեւ միութիւն ու մեկուսութիւն ստեղծելու:

«Կամք՝ բարձրանալու, բարձրացնելու եւ ազգային ձգտումներու իրագործման նուիրեալներէն ըլլալու:

«Այս բնութագրումը իր լաւագոյն տարագաւորումը գգեցած է Աղեքսանդրիոյ մէջ, ուր Հ.Մ.Ը.Մ.ը Կամք է եւ «Կամք»ը՝ Հ.Մ.Ը.Մ.:

«Տարբեր ալ չէր կրնար ըլլալ, եթէ նկատի ունենանք, որ 1912ին այստեղ մարմին առաւ Մարգամշակութային Հայկական Շարժում, Հ.Մ.Ը.Մ.ի ուսուցիչներէն՝ Շաւարշ Քրիստեանի ներկայութեամբ, եւ անոր իսկ առաջարկով կեանքի կոչուած կազմակերպութիւնը, մկրտուեցաւ

«Կամք» անունով եւ այդ օրէն սկսաւ կեանքի վերածուիլ Քրիստեաններու տեսլականը:

«Կամք»ը ունեցաւ հաւատոյ այն հանգանակը, որ հետագային Հ.Մ.Ը.Մ.ինը եղաւ, ու գործեց այն ոգիով ու Մրազիր-Կանոնագիրով, որ սփիւռքատարած Հ.Մ.Ը.Մ.անուն շարժումինը եղաւ...»:

Աղեքսանդրիոյ մէջ վերագտանք Միջերկրականը եւ անոր ծովափնեայ հաճելի ճեմուղին: Տեսանք հայկական դպրոցը, եկեղեցին, իրենց շրջափակով: Հետաքրքրուեցանք աշխարհի եօթը հրաշալիքներէն՝ Աղեքսանդրիոյ 400 ոտք բարձրութեամբ փարոսով:

Մեր ուղեկից եղբայրներուն շնորհիւ վերահասու դարձանք Եգիպտոսի բազմադարեան պատմութեան վերջին (խաւամօ-արաբական) ժամանակահատուածին, պետական պաշտօնատար եղած հայագրի վեզիրներ՝ Պատր Հլ ժամայի, Վարդան Հլ Ռոմիլի, Վահրամ Պահլաւունիի շինարարական յիշարժան իրագործումներուն: Եւ վերջապէս, յիշեցինք Ստիվի Իսմայէլ փաշայի իշխանապետութեան օրերուն Եգիպտոսի վարչապետ եղած Պօղոս Նուպար Փաշան:

Աղեքսանդրիան ալ այցելած ըլլալու գոհունակութեամբ համակուած, մեր կեցութեան երկրորդ օրը իրիկնացաւ, ու մենք հրաւիրուեցանք մարգարաշտ, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի մէկ մրցումին, որմէ ետք ներկայ գտնուեցանք գաղութին հետ գիշերային խորհրդակցութեան մը, վերոնշեալ սեփական պարտէզին մէջ: Հետաքրքիր ու համակիր ժողովուրդ մը փութացած էր, եւ շուտով երգ ու երաժշտութեամբ ծաղկեցաւ ձեռնարկը:

Յայտարարուած էր մամուլով, որ այդ օր պիտի բանախօսէ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը:

Իւրայատուկ դրոշմով ու խանդավառութեամբ կ'ընթանար երեկոյթը, երբ անակնկալօրէն տոքթ. Պայրամեան գտաւ զիս ու յայտնեց որ խօսք պիտի տայ ինձի: Առարկեցի որ նախատեսուած խօսող ունին...:

Քանի մը վայրկեան ետք, տոքթ. Սուրէնը բարձրախօսով զիս հրաւիրեց իր քով (այսինքն բեմ): Երբ մօտեցող չտեսաւ, կրկնեց իր հրաւերը:

Բնական է, խորքին մէջ, գոհ էի որ կը կանչուիմ, եւ Աղեքսանդրիոյ մէջ երկրորդ անգամ Պուրճ Համուտի ու Լիբանանի անունով խօսք կը տրուի ինձի:

Ուղղուեցայ բեմ, ուրկէ դիտուած պարտէզին համայնապատկերը ներշնչող եղաւ:

Ոգեւորուած այդ մթնոլորտէն, փոխանցեցի հետեւեալ մտածումները-

«Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն յաճախաբար հրադադարներէն վերջինը առիթ եղաւ Պուրճ Համուտի պասքէի խումբին ընկերակցելով գալու եւ Եգիպտոսի մեր կառոյցներուն հետ ըլլալու:

«Եկանք ու այսօր ձեզի հետ կը տօնենք Հ.Մ.Ը.Մ.ական միջ-մասնաբաժնիական բնոյթով նախաձեռնութեան մը յաջող կենսաւորումը, եւ այդ միջոցով արձանագրուած մարգագաղափարական յիշատակի յաղթանակ մը:

«Բոլորիս ծանօթ է, որ մեր միջ-գաղութային ձեռնարկները (մրցաշարքեր, սկաւառական բանակումներ...) չեն



Մարզիկներու եւ պատուիրակութեան խմբանկար: Զախէն երրորդը՝ տոքթ. Արզումանեան, վեցերորդը՝ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեան:

կազմակերպուիլի այս կամ այն խումբը բաժակով մը պարգեւատրելու դիտաւորութեամբ, այլ՝ գաղութային միաւորները իրարու կամրջելու, «Կամքեր»ը «Արարատ»ի տեսիլքով գորացնելու, ու հաւաքական մասնակցութիւններով, վախճանական գաղափարական նպատակներուն իրականացման ընծայուած կենարար յաղթանակներ կերտելու համար:

«Գահիրէի մէջ մեր տեսածը եւ զգացածը, Ադեքսանդրիոյ գաղութին ազգային պատկերը, հաւատք կը ներշնչեն մեզի, որ այս ընթացքով, միշտ յաղթական կրնանք ըլլալ, քանի մեզմէ իւրաքանչիւրին հոգիին մէջ կայ «Արարատ»ին նուիրուած հաւատքի խորան, ուր անդադար կը նորոգուի Անոր հասնելու մեր «Կամք»ին ուխտը:

«Կեցցե՛ն «Արարատ»ն ու «Կամք»ը:
«Կեցցե՛ Հ.Մ.Ը.Մ.»ը:

Երկօրեայ անմոռանալի շրջագայութենէն ետք, վերադարձանք Գահիրէ, ուր վերջին գիշերը տեղի ունեցաւ ողջերթի կոչունք, կազմակերպութեամբ «Արարատ»ի վարչութեան, Հելիոպոլիտոյ սեփական ակումբի սրահին մէջ:

Միութենական ձեռնարկներու ամէնէն հոգեյոյզը ընդհանրապէս եղած է նմանատիպ հանդիպումները եզրափակող վերջին հաւաքը, յուշանուէրներու փոխանակումով, շնորհակալական սիրագեղ արտայայտութիւններով, դարձեալ տեսնուելու եղբայրական մաղթանքներու բանաձեռումներով:

Այդ առթիւ յարգելի ու վաստակաւոր երէց եղբայր մը յանձնեց վարչութեան կողմէ ինծի վերապահուած յուշանուէր մը, եւ այս անգամ, ինքնակամ արտասանեցի հրաժեշտի խօսք, որ մօտաւորապէս եղաւ հետեւեալը.-

«Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» գուգորդումը ինչքան դիպուկ կերպով կը պատկերէ գոյգ Մասիսները: Համադրութիւն մը, որ կը խորհրդանշէ կարծեք մեր ազգային նպատակաւաց երթի մայրուղին, այն որ Հ.Մ.Ը.Մ.ինը եղած է ու պիտի

մնայ. այն որուն հաւատաւոր ուղեւոր՝ մեր միութիւնը սեւեռաբիր պիտի հետեւի, մինչեւ հասնի «Սրբազան լեռան կատար»ին, այսինքն մեր ազգային տենչերուն իրականացման:

«Այս գիտակցութեամբ ու յանձնառութեամբ Արարատին նայած է իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական եւ ականջը միշտ անոր կանչին, սիրտը բաբախած է Անոր մշտանորոգ կարօտով:

«Կեցցե՛ Արարատին ուխտադիր «Հ.Մ.Ը.Մ.-Արարատ»ը»:

Այս յուշագրութիւնս կ'աւարտեմ արդարադատ գոյգ մը խօսքով, հասցեագրուած Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի երկու արժանաւոր եղբայրներուն:

Ա. Գահիրէի գաղափարական մեր գանգուածի գործիչներէն՝ Հ.Մ.Ը.Մ.աշէն գործին նուիրուած եղբօր մը, որ եղած է անոր վստահելի եւ մնայուն սիւներէն մէկը:

Խօսքս կը վերաբերի եղբայր Վարուժան Գազանճեանին: Այցելութեանս առթիւ զինք մօտէն ճանչնալով, տեսնելով իր հանրային գիտակից մարդու վարքային դիմանդկարը, կազմուեցաւ մէջս օրինակելի պատկեր մը, ու հասկցայ թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս ան նուաճած է իր շրջապատին գնահատանքն ու յարգանքը՝ գերազանց վարկանիշով:

Բ. Խոստովանիմ որ Եգիպտոս այցելելէս առաջ, ամէն անգամ որ խօսուէր Գահիրէի հայկական գաղութին եւ անոր ազգապահպանման աշխատանքներուն ու ծրագիրներուն մասին, յիշողութեանս մէջ կ'ուրուագծուէր մէկ եւ նոյն անձին՝ տոքթ. Սուրէն Պայրամեանի դիմաստուերը: Ծանօթ էր ինծի գաղութի գաղափարական բազմաբեւեռ կառույցներուն մէջ յանձն առած պարտականութիւններով եւ հանրային կեանքին մէջ ուշագրաւ՝ նախաբեմի դիրքերով...:

Կը յիշեմ, Եգիպտոսէն վերադարձիս, իրեն զրկած երկտողս, ուր արժեւորումը կ'ընէի իր հոգեմտաւոր արժանիքներուն ու կ'ըսէի.-

«Հայկական աշխարհացրիւ գաղութներուն մէջ փոքրաքիւ եւ բազմերախտ Սուրբնները: Բայց ամէն տեղ եւ, ու անտրտունջ կը գործեն «Անձինք նուիրեալք» պարտականութեան, արտակարգ գիտակցութեամբ, ու կ'արժանանան գնահատանքի, իրենց հանրային-գաղափարական ակնբախ յատկանիշներով»:

Պատի՛ւ տոքթ. Պայրամեաններուն ու Վ. Գազանճեաններուն:

(Վերջ)

*Անտիպ: Խմբագրութեան յղուած նախքան իր անակնկալ մահը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 32ՐԴ

ՄԱՐԶԱԽԱՂ ԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ ՊԸՐՄԻՆԿՀԱՄ ՀԱՅ ՍՔՈՒԼԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՎ ՈՂՈՂՈՒԵՑԱԲ

Մարտ Բեշիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Շաբաթ, 7 Յուլիս 2007ին, Վան Նայսի Պրըմիսկհամ Հայ Աթուլը ողողուեցաւ մարդկային հեղեղով, ուր միայն ծափահարող ձեռքեր եւ շարժող գլուխներ կարելի էր տեսնել: Միանուազ ու բարձրաձայն ծափահարութիւններ, որոնք Նաւասարդեան տօնական օրերու հարազատ միջնորդը կը փոխանցէին:

Իրենց յաղթական աւարտին հասան Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 32րդ մարզախաղերը եւ այդ առիթով կազմակերպուած բոլոր ձեռնարկները: Երկու ամսուան արդար մրցակցութիւններէ ետք, անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի մեծ ընտանիքը, միակամ ու ամբողջական, ոտքի ելաւ եւ իր երիտասարդութեան յաղթանակներով բոլորին հու-

թեան մէջ վերակենդանացուց անցեալի Նաւասարդեան պատմական օրերը, փոքրիկ Հայաստանի մը վերածելով Պրըմիսկհամ Հայ Աթուլի շրջափակը:

Փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Պրըմիսկհամ Հայ Աթուլի Ֆուլթայոլի մարզադաշտին վրայ: Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի մարմնամարզի խումբը գեղեցիկ եւ գանազան ներկայացումներով հաճելի պահեր տրամադրեց մարզադաշտ փութացած հազարաւոր հանդիսատեսներուն, որոնք մեծապէս քաջալերեցին ներկայացուած մարմնամարզի արուեստը:

ՉԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Ժամը 7ին, Նաւասարդեան ջահը ձեռամբարձ մարզադաշտ ներկայացուց Լիբանանէն հիւրաբար շրջանը գլուխը ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ եւ լուսանկարիչ եղբ. Լեոն Թաշճեան

եւ հանգամանօրէն վառեց Նաւասարդեան մեծ ջահը, աւետելով բացումը եզակի այս հանդիսութեան:

Հանդիսատեսները այս տարի եւս կազմակերպիչ յանձնախումբին կողմէ հիւրասիրուեցան Նաւասարդեան շապիկներով եւ մարզախաղերը յատկանշող գանազան իրերով:

Օրուան խօսնակներն էին քոյր Նորա Չափարեան (հայերէն) եւ եղբ. Արա Քէշիշեան (անգլերէն), որոնք ուրախութեամբ յայտարարեցին օրուան պաշտօնական պատուիրակութեան մուտքը մարզադաշտ: Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտական Խորհուրդը, մասնաճիւղերու խմբապետական կազմի ընկերակցութեամբ, պատուոյ հարթակ առաջնորդեց Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետիկեանը,



2007ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Նիկոլ Արզումանեանը եւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանը:

Պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետրիկեանի արտօնութեամբ սկիզբ առաւ հանդիսութիւնը: Մարզադաշտ մուտք գործեց Շրջանային Վարչութեան շեփորախումբը, գլխաւորութեամբ եղբ. Վարդան Ասատուրեանի, որ կանգ առնելով պատուոյ հարթակին առաջ, ազգայնաշունչ քանի մը եղանակներ նուագեց եւ ապա իր տեղը գրաւեց մարզադաշտին վրայ: Այնուհետեւ, Շրջանային փոխ խմբապետ եղբ. Նարեկ Պատալեանի հրահանգով տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւնը: Մարզադաշտի երկու կողմերէն մուտք գործեցին Հ.Մ.Ը.Մ.ի 17 մասնաճիւղերը ներկայացնող դրօշախումբերը, որոնք իրենց հետ բերելով Միացեալ Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Նաւասարդեան դրօշները, բարեկեցին պատուոյ հիւրերն ու հազարաւոր ներկաները եւ բեմին վրայ տեղադրեցին դրօշները:

Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի արեւոյշներէն քոյր Նանօր Հինտոյեան մենեղեց Միացեալ Նահանգներու քայ-

լերգը, իսկ քոյր Իվանա Գրիգորեան՝ Հայաստանի քայլերգը: Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգը նուագեց Շրջանային Վարչութեան շեփորախումբը: Քայլերգներէն ետք, ներկաները մէկ վայրկեան յոտընկայս լուսութեամբ յարգեցին յիշատակը վերջերս մահացած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Միսաք Արզումանեանի:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԻՒՐԵՐ

Օրուան հանդիսավարութիւնը կատարեց եղբ. Սիմոն Մանուչարեան, որ առաջին հերթին յայտարարեց օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Լոս Անճելըսի մօտ Հայաստանի փոխ հիւպատոս Սահակ Սարգսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, եղբայրներ Մհեր Դաւիթեան եւ Մանուէլ Մարսէլեան, Նաւասարդեան 32րդ մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետրիկեան, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Նիկոլ Արզումանեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Թիւֆէնքճեան, ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութեան ատենապետ ու Հի Յասմիկ Տէրտէրեան, Քալիֆորնիոյ նահանգային խորհուրդի անդամ Փօլ Գրիգորեան, Կլէնտէյլի քաղաքապետ Արա Նաճարեան, Կլէնտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Պապ Եուսէֆեան, Կլէնտէյլի միացեալ վարժարաններու խորհուրդի նախագահ Կրէյկ Գրիգորեան եւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Ապա, եղբ. Մանուչարեան ընդգծելով հայ ժողովուրդի ապրելու եւ տիպար քաղաքացի ըլլալու



զօրաւոր կամքը, ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ի արձանագրած նուաճումներէն մեծագոյնը նկատուող Նաւասարդեան մարզախաղերը, որոնք ոչ միայն կը նպաստեն միութեան թուական աճին, այլեւ կենդանի կը պահեն հայ ժողովուրդի աւանդութիւններն ու արժէքները:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Շրջանային Վարչութեան անունով ներկաները ողջունեց ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան: Ան շնորհաւորեց Նաւասարդեան մարզախաղերուն յաջող աւարտը եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, կամաւորներուն, մարզիչներուն, օժանդակողներուն եւ ծնողներուն, որոնք օգտակար հանդիսացան հայ երիտասարդութիւնը համախմբող շրջանի հայկական մեծագոյն այս նախաձեռնութեան իրականացման համար:

Ապա, եղբայրը անցնող աշխատանքային տարին Հ.Մ.Ը.Մ.ի համար բարեբեր նկատելով, յայտարարեց, թէ «իրականացած է նոր կեդրոն մը եւ բաւակալայր մը ունենալու Հ.Մ.Ը.Մ.ի երա-



Եղբ. Քրիստափոր Գասամանեան:



զը եւ նոր մարզադաշտեր ապահովելու աշխատանքին մէջն ենք: Այսուհետեւ մեր բոլորին պարտականութիւնն է այս կազմակերպութեան շուրջ համախըմբել մեր երիտասարդները, որպէսզի անոնք առողջ միջավայրի մը մէջ ապրին, մարզական մաքրամաքուր ոգիով»:

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՍԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-

թեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ իր խօսքին սկիզբը հաստատեց, որ «Նաւասարդեան մարզախաղերը 32 տարիներէ ի վեր ազգային հպարտութեան, հաւաքական հրճուանքի եւ մարզական յաղթանակի օրեր են ոչ միայն այս շրջանի, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը բաղկացնող 99 մասնահիւղերուն համար՝ Շուէտէն մինչեւ Պէյրութ եւ Գահիրէէն մինչեւ Մելպուռն»:

Բարձր գնահատելով մարզախաղե-

րու իրականացման աշխատանքը, ան ըսաւ. «Կը բաւէ պահ մը նկատի ունենալ կազմակերպչական այն հսկայական աշխատանքը, որ անհրաժեշտ է շրջանի բոլոր մասնահիւղերէն բազմահազար մարզիկներ մէկտեղելու, 8 մարզախաղերու հաւաքական ու անհատական 1800է աւելի մրցումներ կատարելու, յաղթանակի պարահանդէս, փակման հանդիսութիւն ու փառատօն կազմակերպելու համար եւ այն ատեն միայն ըմբռնելի կը դառնայ տարողութիւնը այն մեծ գործին, զոր այս շրջանը 1975էն ի վեր կը կատարէ՝ տարուէ տարի աւելի մեծ մասնակցութեամբ եւ բծախնդիր պատրաստութեամբ:

«Արցունք, ժպիտ, յուզում եւ հրպարտութիւն իրարու կը խառնուին, երբ կը տողանցեն Հ.Մ.Ը.Մ.ի խրոխտ շարքերը: Ու Այդ շարքերը լաւագոյն պատասխանը կու տան հայութեան այլատերութեամբ, տկարացումը եւ օտարացումը ցանկացող ուժերուն: Դիւրին չեն ժամանակները այլեւս, եւ այսօր բոլորս կ'անդրադառնանք մեր դէմ ցցուած մեծ դժուարութիւններուն»:

Եղբայրը ուրախութեամբ յայտարարեց, թէ ներկայիս աշխարհի տարածքին

Պաշտօնական հիւրերը մուտք կը գործեն դաշտ:





ՆԱԽԱՐԱՐԴԵԱՆ 32ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԽՈՐՄԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՊԱՍԵՆԹՊՈԼ

1. Կլենտեյլի «Արարատ» մասնաճիւղ
2. Լոս Անճելըսի մասնաճիւղ
3. Գրեսենթա Յովիտի «Շանթ» մասնաճիւղ

ՖՈՒԹՊՈԼ

1. Լոս Անճելըսի մասնաճիւղ
2. Կլենտեյլի «Արարատ» մասնաճիւղ
3. Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ

ՎՈԼԻՊՈԼ

1. Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
2. Կլենտեյլի «Արարատ» մասնաճիւղ
3. Սան Ֆեռնանտո Յովիտի «Մասիս» մասնաճիւղ

ԹԵԹԵՒ ԱԹԼԵԹ

1. Սան Ֆեռնանտո Յովիտի «Մասիս» մասնաճիւղ
2. Գրեսենթա Յովիտի «Շանթ» մասնաճիւղ
3. Սան Ֆեռնանտո Յովիտի «Մասիս» մասնաճիւղ

ԼՈՂ

1. Սան Ֆեռնանտո Յովիտի «Մասիս» մասնաճիւղ
2. Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
3. Գրեսենթա Յովիտի «Շանթ» մասնաճիւղ

ԹԵՆԻՍ

1. Կլենտեյլի «Արարատ» մասնաճիւղ
2. Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
3. Լոս Անճելըսի եւ Ուոլնթ Զրիքի «Կարս» մասնաճիւղեր

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

1. Կլենտեյլի «Արարատ» մասնաճիւղ
2. Գրեսենթա Յովիտի «Շանթ» մասնաճիւղ
3. Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ

գործող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն թիւը հասած է 99ի եւ նորագոյն մասնաճիւղը Մարսէյի միաւորն է (Ֆրանսա) եւ աւելցուց ըսելով՝ «Այսպէս, քիչ մը ամէն տեղ Հ.Մ.Ը.Մ.ի նոր սերունդը կեանքով, խանդավառութեամբ եւ յոյսերով կը լեցնէ հայ իրականութիւնը, մէկ կողմէ մեր կեանքի ընկրկումներուն հակադրելով իր տեւական կենսունակութիւնը, իսկ միւս կողմէ՝ հաստատ երաշխիքը տալով այն խոստումին, թէ ինք մի շտ պատրաստ է իր դերին ու կոչումին հաւատարմութեամբ

բարձրանալու եւ իրմով հպարտացող հայութիւնն ալ իր հետ բարձրացնելու»։

Եզրակացնելով, եղբ. Մկրտիչեան շնորհաւորեց շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքն ու հայութիւնը, որ «կամաւոր բանակ» դարձած, մեծ ու պզտիկով բարձր կը պահէ այն դրօշը, որ աւանդ ձգուած է միութեան հիմնադիրներէն։

ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔԸ

Հայրական իր օրհնութիւններն ու

շնորհաւորանքները փոխանցեց Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ առաջին հերթին փառք տուաւ Աստուծոյ, որ յաղթական աւարտին հասցուց Նաւասարդեան մարզախաղերը եւ շեշտեց, թէ «Նաւասարդեան մարզախաղերու այս 32րդ օղակը գումարուեցաւ այն երկար շղթային վրայ, որուն վերջին մօտաւորապէս 90 օղակները կը կրեն Հ.Մ.Ը.Մ.ի անունը։ Մեր պատմութեան հինհին դարերէն ծայր առած փայլուն շղթան այն կամուրջն է, որ մեզ՝ ապրող սերունդս կը կապէ մեր փառաւոր անցեալին, մեր հին ու ժամանակակից յաղթանակներուն, բոլոր այն նուանումներուն, որոնք հպարտութեան աղբիւր են իւրաքանչիւր հայու համար, Հ.Մ.Ը.Մ.ի Շուշանածաղիկով ու Եռագոյն դրօշով ներշնչուողներուն համար»։

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ յաղթանակի հոմանիշ, իսկ Նաւասարդեան մարզախաղերն ու յաղթանակի պարահանդէսը ազնիւ մրցակցութեան թաղադրում որակելով, Առաջնորդը վեր առաւ անոր հետապնդած նպատակները եւ ընդգծեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ը «Եղած է սերնդակերտումի ու հայակերտումի մեծ դպրոց մը, բաղին ամէնէն ազնիւ եւ վաւերական իմաստով։ ...«Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» նշանաբանը, անոր դրօշը կրողներուն համար եղած է անփոխարինելի ուղեցոյց։ Աւելի՛ն, Հ.Մ.Ը.Մ.ականը սորված է ազնիւ մրցակցութեան իմաստը, ըմբռնած է անոր մարդկային խորքը, առաքինութիւն մը, որ յատուկ իմաստ եւ արժէք կը զգենու մանաւանդ մեր այսօրուան աշխարհին մէջ, ուր նիւթը դարձած է գլխաւոր չափանիշ, ուր նիւթապաշտութիւնն ու անձնակեդրոնութիւնը իրենց աւերիչ անդրադարձները կ'ունենան ամէնուրեք»։


Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր բարձրացո՛ւր» նշանաբանին արժէքն ու այժմէականութիւնը ընդգծելով Առաջնորդը վստահեցուց, որ «Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ տեղի ունեցող մրցումներուն յաղթականն ու պարտեալը համարժէք են, յաղթականին շահած բաժակն ու պարգեւը կը վերադառնան Հ.Մ.Ը.Մ.ին, անով կը հպարտանան բոլորը անխտիր, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը

հաւատարիմ կիրարկողն է նաեւ այն պատգամին, որ կ'ըսէ՝ «կարելոք մասնակցիլն է եւ ոչ թէ անպայման յաղթելը»:

Եզրակացնելով, Առաջնորդ Հայրը շնորհաւորեց ներկայ Հ.Մ.-Ը.Մ.ականները, վարչականները, Շրջանային եւ Կեդրոնական Վարչութիւնները, պատուոյ նախագահն ու բոլոր այն անհատները, որոնք ամիսներ շարունակ գործեցին այս նուաճումները իրականացնելու համար: «Թող հանգրուան առ հանգրուան երկարող շղթան մեզ անելի՛ ամուր կապէ մեր ժառանգութիւններուն, մեր պատմութեան եւ հայրենիքին՝ Հայաստանին, Արցախին ու սփիւռքեան բոլոր օնախներուն»:

ԲԱԺԱԿՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ

Առաջնորդին խրախուսիչ օրհնութիւններուն յաջորդեց Նաւասարդեան մարզախաղերուն գլխաւոր առանցքը հանդիսացող յաղթանակի



Քոյր Նայիրի Տէրտէրեան:

բաժակներու տուչութիւնը: Շրջանային Մարզական որհուրդի ատենապետուհի քոյր Նայիրի Տէրտէրեան շնորհակարտ-

թիւն յայտնեց իր գործընկերներուն եւ բոլոր անոնց, որոնք օգնութեան ձեռք հանդիսացան երկարաշունչ Նաւասարդեան մրցումներուն եւ ապա յայտարարեց իւրաքանչիւր մարզաձեւի յաղթական մասնաճիւղերը:

Որոտընդոստ ծափողջոյններու ընդմէջէն, մասնաճիւղերու ներկայացուցիչները հպարտութեամբ ըստանձնեցին ախոյեանութեան բաժակները: Այս տարի յաղթանակի բոլոր բաժակները նուիրուած էին Հայկական Յեղասպանութեան վերապրողներուն, իբրեւ զնահատանք կեանքի դժուարութիւնները յաղթահարելու գորաւոր կամքին ու գոյատեւելու վճռակամութեան:

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթիւնեանի եւ Շրջանային Վարչութեան մարզականի ներկայացուցիչ եղբ. Ժանօ Գահվէճեանի ընկերակցութեամբ, բաժակներուն յանձնումը կատարեցին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետիկեան եւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ՏՈՂԱՆՅՔԸ

Եւ ահա վերջապէս հասաւ այնքան սպասուած տողանցքի պահը: Շրջանային Վարչութեան շեփորախումբի ազգային ու յեղափոխական ոգեւորիչ եղանակներու ընկերակցութեամբ, հպարտութեամբ տողանցեց Հ.Մ.-Ը.Մ.ի շրջանի մեծ ընտանիքը: Խտացած շարքերով եւ 32 տարիներու փորձառութեան հպարտանքով տողանցեցին Հ.Մ.-Ը.Մ.ի 17 մասնաճիւղերը ամբողջական շարքերով: Անոնք Հ.Մ.-Ը.Մ.ականի ինքնավստահութեամբ բարեւեցին պատուոյ հիւրերն ու զիրենք խրախուսող ծովածաւալ բազմութիւնը եւ հեռացան դաշտէն:

Յատկանշական էր Հ.Մ.-Ը.Մ.ի Գրեսէնթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղին պարզած հսկայական պաստառը, որ հպարտութեամբ կը շնորհաւորէր իր գործօն անդամներէն մարզիչ-մարզիկ եղբ. Վարուժ Պետիկեանը, Նաւասարդեան 32րդ մարզախաղերու պատուոյ

ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԵՒ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Նաւասարդեան 32րդ մարզախաղերը ընդգրկեցին ֆութպոլի, պասքէթպոլի, վոլիպոլի, լողի, թեթեւ արթիթի, փինկ-փոնկի, թենիսի եւ ճատրակի մրցումներ:

Պասքէթպոլի գտումի մրցումները տեղի ունեցան Պըրմիսկիամ Զայ Սքուլի մարզադաշտերուն վրայ: Նոյն վարժարանի լողաւազաններուն եւ ֆութպոլի մարզադաշտին շրջակայքը տեղի ունեցան լողի եւ թեթեւ արթիթի երկսեռ բոլոր դասակարգերու անհատական եւ խմբային մրցումները:

Թեթեւ արթիթը ընդգրկեց 50, 100, 200, 400 մէթր վազքի, 800, 1500 եւ 3000 մէթր երկար վազքի, մէկ քայլ ոստումի եւ գունդ նետելու անհատական, ինչպէս նաեւ 4x50, 4x100 եւ 4x400 մէթր դրօշարշաւի խմբային մրցումներ:

Փինկ-փոնկի, թենիսի եւ ճատրակի գտումի եւ ախոյեանութեան մրցումները տեղի ունեցան Պըրմիսկիամ Զայ Սքուլի սրահներուն մէջ: Ֆութպոլի մրցումները եւս կատարուեցան նոյն վարժարանի մարզադաշտերուն վրայ: Ֆութպոլի մրցումներուն մասնակցեցան 11 մասնաճիւղերէ 45 խումբեր:

Մասնաճիւղերէն անկախ, Նաւասարդեան մարզախաղերուն բարեկամական մրցումներ ունեցաւ Զ.Ս.Ը.Մ.ի ֆութպոլի վեթերաններու խումբը, որ ընդհանրապէս կազմուած է Զ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի ֆութպոլի նախկին աստղերէ:



նախագահութիւնը ստանձնած ըլլալուն համար: Մասնաճիւղին տողանցող պատւիրակութիւնը կանգ առաւ պատուոյ հարթակին դիմաց եւ հանրութեան բարեւելէ ետք՝ արի եւ արեւոյժ մը շնորհաւորական յուշանուէր մը յանձնեցին պատուոյ նախագահին, իսկ ատենապետուհի քոյր Արփի Նալպանտեան մասնաճիւղին գոյնով (սրճագոյն) եւ անուներ կրող փողկապ մը նուիրեց անոր:



Շքերթին հպարտութեամբ միացաւ Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրի յանձնախումբը, աւետելով իրականացումը տարիներու երազանք հանդիսացած հրաշալի բանակավայրին:

Ներկայ բազմա-հազար հասարակութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերով ոգեւորւած, երկարաշունչ ծափող ջոկններով ողջունեց տողանցողները:

Գնահատական խրախուսիչ արտայայտութիւններով մասնաճիւղերը, անոնց պատմականն ու արձանագրած մրցանակները յայտարարեցին քոյր Նորա Չափարեան եւ եղբ. Արա Քէշիշեան:

Եւ ահա, ճերմակ շապիկներ հագած եւ վառած մոմեր բռնած խումբ մը գայլիկ-արծուիկներ ու մարզիկ-մարզիկուհիներ, մարզադաշտ առաջնորդեցին Հայկական Յեղասպանութենէն վերապրող Սիրվարդ Մարգարեանն ու Ղազար

րոս Գատէմեանը: Ափսո՛ս, այնքան յոգնած ըլլալով անոնք յատուկ կառքով ներկայացան մարզադաշտ, բարեւեցին ներկաները եւ իրենց ապրելու կամքը գոհունակութեամբ փոխանցելով բոլորին մեկնեցան, յուզումնախառն զգացումներ արթնցնելով ներկաներուն մօտ:

Յայտագրի վերջին բաժնով ելոյթ ունեցաւ ազգային-յեղափոխական երգերու մեկնաբան Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Գառնիկ Սարգիսեան, որ յեղափոխական քանի մը երգով խանդավառեց արդէն իսկ ուրախ մթնոլորտը: Երգերուն ընկերակցեցան յատուկ պայթուցիկներ, որոնք գունաւոր ժապաւէններ արձակելով գեղեցիկ տեսարան մը ստեղծեցին մարզադաշտին վրայ:

Հանդիսութեան վերջաւորութեան ներկաները հայկական ահոյ գուռնայով առաջնորդուեցան փառատօնին շրջափակը, ուր Նաւասարդեան խրախճանքը շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր:

With the compliments of

Restaurant Al-Mayass

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ 32ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԲԱՑԱՌԻԿ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Նախարդեան 32րդ մարզախաղերու մեծագույն ձեռնարկներէն՝ յաղթանակի պարահանդէսը տեղի ունեցաւ «Եռնիվըրսլ Շերըթըն» պանդոկին սրահը, աւելի քան 600 մասնակիցներով:

Պարահանդէսին բացումը կատարելով, կազմակերպիչ յանձնախումբին անունով ներկաները ողջունեց քոյր Լինա Դաւիթեան եւ ըսաւ. «Դուք հոս էք այսօր, որպէսզի ձեր գօրակցութիւնը յայտնէք: Դուք եկած էք ըսելու, թէ կը հաւատաք այս միութեան նպատակին, կը քաջալերէք գայն եւ յատկապէս այսօր եկած էք տօնախմբելու այս կազմակերպութեան յաղթանակները: Եթէ ձեր շուրջը նայիք, պիտի տեսնէք, թէ այս կազմակերպութիւնը կ'առաջնորդը-



Եղբ. Բեգլար Փիլաւճեան խօսքի պահուն:



ւի յաջորդ սերունդով, անոնք քոյրեր եւ եղբայրներ են, որոնք հասակ նետած են Հ.Մ.Ը.Մ.Ի դրօշին տակ: Անոնք սկառուտներ, մարզիկներ եւ կամաւոր աշխատողներ են, որոնք կը փոխարինեն դեկավարութիւնը այս կազմակերպութեան»: Ապա ան հրաւիրեց ներկաները յոտնկայս ունկնդրելու Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգները, որոնք իր հմայիչ ձայնով կատարեց երգչուհի Անահիտ Ներսիսեան, դաշնակի ընկերակցութեամբ Լեւոն Աբրահամեանի:

Ճաշի սեղանները օրհնեց Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Իսկ օրուան հանդիսավարութիւնը ձեռնհասօ-

Եղբ. Վարուժ Պետիկեան կը ստանայ Նախարդեան 32րդ խաղերու պատուոյ նախագահութեան ետագոյն երիզը:

րէն կատարեց եղբ. Բեգլար Փիլաւճեան: Գործադրուեցաւ պաշտօնական յայտագիր մը, որուն ընթացքին օրուան հանդիսավարը ներկայացուց ներկայ պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Լիբանանէն Նախարդեան ձեռնարկներուն համար յատկապէս հրաւիրուած Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամներ Մանուէլ Մարսէլեան եւ Մհեր Դաւիթեան, Լոս Անձելըսի մէջ Հայաստանի փոխ հիւպատոս Սահակ Մարգսեան, Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեան, Կլէնտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Պապ Եուսէֆեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէին կողմէ Յակոբ Թիւֆէնքեան, ՀՕՄԻ



Շրջանային Վարչութեան ատենապետուհի Սոնիա Փելթեքեան, Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներ, Ազգային Վարչութեան ներկայացուցիչ Վահան Պզտիկեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ Վահէ Իմաստունեան, Նաւասարդեան անցեալի նախագահներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, հովանաւորներ եւ բազմաթիւ հիւրեր:

Այնուհետեւ, ներկաները վայելցին Հ.Մ.Ը.Մ.ի նպատակն ու գործունէութիւնը ներկայացնող տեսաերիզ մը, որ պատրաստուած էր արուեստագէտ Արա Սուչեանի կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան: Ան Շրջանային Վարչութեան կատարած աշխատանքներուն անդրադառնալով, կեդրոնացաւ վերջերս իրականացած երեք ծրագիրներու վրայ:-

Ա.- Հ.Մ.Ը.Մ.ի նոր կեդրոն, միութե-



Նաւասարդեան 32րդ մարզախաղերու պատուոյ Ասիազաւի եղբ. Վարուժ Պետիկեան: նական կեանքի բոլոր յարմարութիւններով:

Բ.- Սկստուական բանակավայր: 24 էջերը [97122 քառ. մեթր- «Մ.»] հողատարածք մը, որ վստահաբար լաւագոյն վայրը պիտի հանդիսանայ հզօրացնելու շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի սկստուական թեւը: Այս առիթով ան ներկայացուց նաեւ համապատասխան յանձնախումբը:

Գ.- Մարզադաշտը, որ 4000է աւելի մեր մարզիկ-մարզիկուհիներուն անհրաժեշտ է փորձեր կատարելու համար: Շնորհիւ հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Վիգէն Աբէլեանին կարելիութիւնը ստեղծուած է գէթ ժամանակաւոր ընդարձակ մարզական կեդրոնատեղի մը ապահովել Հ.Մ.Ը.Մ.ին:

Ատենապետը նաեւ յատուկ հպարտութեամբ յայտարարեց եւ շնորհաւորեց շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծագոյն մասնաճիւղը՝ Կլէնտէյլի «Արարատ»ը, որ երկրորդ կեդրոնատեղի մը գնելու յանձնառութեան տակ մտած է, ինչ որ մեծապէս պիտի նպաստէ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծագոյն մասնաճիւղին



սակարկ նուիրումն ու ներդրումը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական - 2007»ի տրոփումը շնորհեց իրեն: Այս ուրախ առիթով «Մարզիկ» հանդիպում մը ունեցաւ երօր հեղ:

«ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ - 2007»

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը բարձր գնահատելով եղբ. Նիկոլ Արզումանեանի երկար փորձերն ու ան-

հինը դրած է մասնաճիւղի վոլիպոլի աղջկանց խումբին:

Հ.Մ.Ը.Մ.ին առնթեր, եղբ. Արզումանեան անդամակցած է գործօն մասնակցութիւն բերած է տեղւոյն Հայ Երիտասարդաց Միութեան աշխատանքներուն:

Ան հայերէն խօսիլ, գրել, կարդալ սորված է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս: Իրեն համար մեծ հպարտութիւն է Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի հիմնադիր անդամ եղբ. Արշակ Եսայեանի դաստիարակութիւնը ստացած ըլլալը:

«Ինծի համար Հ.Մ.Ը.Մ.ը եղած է երկրորդ ընտանիքս, հայկական դպրոցս, կեանքիս առաջնորդը: Այդ օրերուն, Պաղտատի մէջ հայկական վարժարաններ գոյութիւն չունէին, սակայն Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ բոլորիս հայկական վարժարանը, ուր սովորեցանք եւ գործածեցինք հայ լեզուն», հպարտութեամբ ընդգծեց եղբայրը:

1962ին, Պէյրութ այցելութեան ընթացքին ան ծանօթացած է Լուսին Գաբրիէլեանին, որուն հետ ամուսնացած է տարի մը ետք: Բախտաւորուած է երկու մանչ պաւակով՝ Սուրիկ եւ Հրաչ: Ունի երեք թոռներ:

1971ին, եղբ. Արզումանեան ընտանիքին հետ փոխադրուած է Միացեալ Նահանգներ եւ բնակութիւն հաստատած է նախ Փասատինա, այնուհետեւ՝ Նոյի վոտ: Նոյն տարին, ընտանեօք անդամակցած է շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի նորաստեղծ մասնաճիւղին:

Մ. Նահանգներ կեցութեան ընթացքին աշխատած է

մարզական կարիքներուն եւ ընդհանրապէս շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն:

Այնուհետեւ տեղի ունեցաւ Նաւասարդեանի պատուոյ նախագահութեան փոխանցման արարողութիւնը:

Նախորդ պատուոյ նախագահ Յովսէփի եւ Էլիզապէթ Պոյաճեաններ պատուոյ նախագահութեան պարտականութիւնները պաշտօնապէս փոխանցեցին նոր նախագահութիւնը ստանձնած Վարուժ Պետիկեանին, որ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած պատիւին համար:

Այս տպաւորիչ ելոյթէն ետք, եղբ. Արթիւնեան գոհունակութեամբ յայտարարեց, թէ Վարուժ Պետիկեան յիսուն հազար տողար կը նուիրէ Հ.Մ.Ը.Մ.ին եւ, առ ի գնահատանք անոր միութեան կանսակարկ նուիրումին ու նիւթաբարոյական օժանդակութեան, զայն պարգեւատրեց յատուկ յուշանուէրով մը:



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթիւնեան, պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետիկեան եւ տէր եւ տիկին Վարանդ եւ Հորի Մելքոնեաններ:

ԵՂԲ. ՆԻԿՈՒ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

«Քարփեթերիս» գորգի վաճառատունը, ուր իր արդիւնաւէտ եւ յուրջ աշխատանքին շնորհիւ հասած է մինչեւ տնօրէնութեան պաշտօնին: Միաժամանակ, ան բեղուն գործունէութիւն ունեցած է Հ.Մ.Ը.Մ.էն ներս: Սկզբնական տարիներուն օգտակար հանդիսացած է մասնաճիւղի ընդհանուր աշխատանքներուն, ընկերային, սկաուտական եւ յատկապէս մարզական կեանքէն ներս, շրջանի երիտասարդութիւնը համախմբելով Հ.Մ.Ը.Մ.ի ֆուրպոյլի եւ պասքեթպոյլի խումբերէն ներս, ի հարկին ստեղծելով համապատասխան նոր խումբեր:

Բազմաթիւ տարիներ վարչական ընտրուելով ան ստանձնած է մարզական բաժանմունքի եւ գանձապահի պատասխանատուութիւններ: Միաժամանակ, բազմիցս մասնակցած է շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն ժողովին: Նշանակուած է նաեւ Շրջանային Մարզական որհուրդի անդամ:

Հ.Մ.Ը.Մ.էն անկախ եղած է Հոյիվուտի Ս. Կարապետ եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամ, օգտակար հանդիսացած է «Ալեք Փիլիպոս» Ազգ. Վարժարանին: Անդամակցած է նաեւ Քալիֆորնիոյ իրաքահայ միութեան:

Եղբայրը սիրով կատարած է իրեն վստահուած բոլոր պարտականութիւնները եւ բազմաթիւ անգամներ պարգեւատրուած է.-

- 1998ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի 30ամեակին առիթով:

- 2000ին, Շրջանային Վարչութեան կողմէ արժանացած է «Ծառայութեան» շքանշանին:

- 2004ին, «Մարզիկ»ի 25ամեակին առիթով, Կեդրոնական Վարչութեան կողմէ, երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթին առաքումն ու անդամավճարներու գանձումները կատարելուն համար:

Ներկայիս, եղբ. Արզումանեան առողջական պատճառներով հանգստեան կոչուած է, սակայն միութեան կան իր աշխատանքը կը շարունակեն երկու մանչերը՝ Սուրիկն ու Հրաչը: Երկուքն ալ Հ.Մ.Ը.Մ.ականներ են եւ գործօն մասնակցութիւն կը բերեն Հ.Մ.Ը.Մ.էն ներս, յատկապէս պասքեթպոյլի ճիւղին մէջ, իբրեւ մարզիկ եւ մարզիչ: Եղբ. Սուրիկ Արզումանեան ծանօթ է իբրեւ արդար իրաւարար թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի եւ թէ՛ ամերիկեան շրջանակներէն ներս:

«Ինծի համար մեծ հպարտանք է «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին արժանանալը: Հ.Մ.Ը.Մ.ը ինծի վեհանձնութիւն, ներողամտութիւն, ազգային ոգի եւ պարտականութեան գիտակցութիւն սորվեցուցած է, որուն համար մեծապէս երախտապարտ եմ: Իմ փափաքս պիտի ըլլայ իւրաքանչիւր հայ երիտասարդ անպայման անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ին, որպէսզի ազգային նկարագիրով մեծնայ», յուլումով շեշտեց եղբայրը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԸ ԱՆԿԻՆԱԳԱՐՉ ՄԸ ԵՂԱԲ ՄԱՍՆԱԿԻՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



Մարո Քեչիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

ՀՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Դաստիարակչական յանձնախումբի կազմակերպած միջ-մասնաճիւղային վարչութիւններու խորհրդաժողովը տեղի ունեցաւ Կլէնտէյլի «Հիլթըն» պանդոկի սրահներէն մէկուն մէջ, մասնակ-

ցութեամբ շրջանի 17 մասնաճիւղերու վարչական կազմերուն:

Նախաճաշէն ետք, ներկաները ողջունեց յանձնախումբի անդամներէն քոյր Շաքէ Գալայճեան, որ առաջին հերթին իր գոհունակութիւնը յայտնեց մեծ թիւով ներկայութեան համար եւ ներկայացուց օրուան յայտագիրը:

Օրուան գլխաւոր բանախօսն էր ծանօթ իրաւաբան Մարք Կիրակոս: Ան գլխաւորաբար անդրադարձաւ երիտասարդութեան եւ մանաւանդ հայ երիտասարդութեան առողջ միջավայր մը ստեղծելու հրամայականին մասին, որուն իրականացման մէջ իր լաւագոյն ներդրումը կրնայ ունենալ ՀՄԸՄ: Մարք Կիրակոս համապատասխան օրինակներով ընդգծեց երիտասարդութեան մաքուր նկարագրի կերտման կարեւորութիւնը, անոնց կեանքի մակարդակին բարձրացումը, մեր ամբարած գիտելիքներուն փոխանցումը յաջորդող սերունդներուն, անոնց ապահովելով առողջ եւ ապահով միջավայր մը:

«Հանրային Կապ» եւ Marketing նիւ-



Թերը սպառիչ կերպով ներկայացուց Զանգու Արմէնեան: Ան նախ յստակացուց, որ պէտք է հասկնալ, թէ ինչի՞ մասին կը խօսինք եւ մեր ձայնը պէտք է լսելի դարձնել, հաղորդուելով մեր շրջապատին հետ: Ան շեշտեց փոխանցելի պատգամի յստակացման եւ հանդիսատեսի պահանջներուն ծանօթացման անհրաժեշտութիւնը: Ան նաեւ ընդգծեց հայ մշակոյթի, արժէքներու եւ սովորութիւններու փոխանցման կարեւորութիւնը, ինչպէս նաեւ փոխանցեց քարոզչութեան նորագոյն միջոցները:

Օրուան երրորդ նիւթը՝ «Ինչպէ՞ս կարելի է ժողով մը ազդեցիկ ձեւով վարել», ներկայացուց ծանօթ Հ.Մ.Լ.Մ.ական եղբ. Արմէն Աբրահամեան, առաջին հերթին պարզելով ժողովը վարող ղեկավարին փորձառու եւ կարող ըլլալու յատկութիւնները: Ան թուեց ժողովի մը նախապատրաստական աշխատանքները, քննելի նիւթերը, ժողովականներու հաւաքական մասնակցութիւնը եւ պարտականութիւնները: Եղբայրը նաեւ ընդգծեց քննուած աշխատանքի մը իրագործումէն ետք՝ անոր արժեւորման կարեւորութիւնը:

«Հեղինակաւոր ղեկավարութիւն» նիւթը փոխանցեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան: Եղբայրը ներկայացուց խմբային աշխատանքի կարեւորութիւնը, նիւթակնի օգտակար եւ տեղին օգտագործումը եւ մանաւանդ արդար ղեկավար մը ըլլալու նախապայմանները: Ան շեշտեց նաեւ, որ աշխատանքի մը յաջողութեան բանալին անոր մասնակիցներու ոգիին բարձրութիւնն է:

Օրուան գլխաւոր նիւթերէն մէկն էր «Սերունդներու տարբերութիւնները»: Նիւթը ներկայացուց մասնագէտ Անն Սանպրկ:

Ըստ դասախօսին, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով չորս սերունդներ միասին կը գործեն, ինչ որ երկարակեցութեան եւ անոր հետեւանքով երկար տարիներ աշխատելու արդիւնք է:

Ակնարկուած չորս սերունդները կարելի է դասաւորել հետեւեալ ձեւով. -

- 62 - 81 տարեկաններ.
- 43 - 61 տարեկաններ.
- 28 - 42 տարեկաններ.
- 12 - 27 տարեկաններ.

Կարեւոր ախտաճանաչումներով եւ համապատասխան օրինակներով դասախօսը միջոցներ թելադրեց տարբեր տարբերութիւններու պատճառով սերունդներու միջեւ տեղի ունեցող բախումներուն առաջը առնելու համար: Ան մատնանշեց նորահաս սերունդները լաւապէս հասկնալու անհրաժեշտութիւնը եւ անոնց հետ համագործակցելու հրամայականը:

Նոյն մատնանշումները կատարեց նաեւ կազմակերպիչ



յանձնախումբի անդամներէն եղբ. Արամ Չոպանեան, որ ներկայացուց Հ.Մ.Լ.Մ.ի թուական ընդհանուր պատկերը, եւ սերունդներու տարբերութիւնը սկստակական, մարզական եւ այլ աշխատանքներէ ներս: Եղբայրը ընդգծեց երիտասարդութեան մէջ պատասխանատուութեան գիտակցութիւն արմատաւորելու եւ զայն ղեկավարութեան հասցնելու կարեւորութիւնը:

Շրջանային Վարչութեան անունով մասնակիցներուն շնորհակալութիւն յայտնեց եղբ. Սթիւ Արթինեան: Եղբայրը բարձր գնահատեց Շրջանային Դաստիարակչական յանձնախումբը նման բարձր մակարդակի խորհրդաժողով մը կազմակերպելուն համար: Առիթը պատեհ նկատելով, ան ներկայացուց յանձնախումբի անդամները՝ քոյրեր Մոնէ Տէր Գրիգորեան եւ Շաքէ Գալպեան, եղբայրներ Արամ Չոպանեան, Ներսէս Մելքոնեան, Ռազմիկ Շիրինեան, Արա Գազանճեան եւ Յարութ Մարտիրոսեան: Յանձնախումբին մօտ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչն է քոյր Սալբի Ճէճէեան:

Խորհրդաժողովը վերջ գտաւ կէսօրէ ետք ժամը 4ին, «Յառաջ նահատակ» քայլերգով: Մասնակիցները ուրախ տրամադրութեամբ հրաժեշտ առին, իրենց ամբարած զիտելիքները մասնաճիւղերէն ներս կիրարկելու հաստատակամութեամբ:

ՄՍԱՑԱՆՔ

EL 24 DE ABRIL y HOMENETMEN

Dedicado al 90º Aniversario del Genocidio Armenio

(«Հ.Մ.Լ.Մ. եւ Ապրիլ 24» գրքոյկի սպաներէն թարգմանութիւնը)

Պատրաստութիւն Կարօ Թիթիւնճեանի, թարգմանութիւն Արրահամ Ահարոնեանի, 2007, Պուէնոս Այրէս, Արժանութիւն:



ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ 23ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԱՒԱՐՏԵՑԱՆ ԱՆՆԱԽԵԸՆԹԱՑ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ



Մարտ Քեչիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Երկար ամիսներու մրցակցութիւններէ ետք, Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական 23րդ Մարզախաղերը (ՔԱ.Հ.Ա.Մ.) իրենց աւարտին հասան աննախընթաց յաջողութեամբ: Փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կլէնտէյլ Գոլֆֆի Փոլիսպոլի մարզադաշտին վրայ, մասնակցութեամբ բազմահարիւր ծնողներու, ուսուցիչ-ուսուցչուհիներու, տնօրէններու, մարզասէր համակիրներու եւ պաշտօնական անձնաւորութիւններու:

Ձեռնարկին խօսնակն էր քոյր Նորա Չափարեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, վստահեցուց, թէ ՔԱ.Հ.Ա.Մ.ը լոկ մարզախաղեր չէ, այլ՝ գլխաւոր նպատակ ունի մէկ դրօշի տակ համախմբել շրջանի հայ վարժարաններու երկսեռ աշակերտութիւնը, մարզական մաքուր մթնոլորտ մը ստեղծելով անոնց, ինչ որ Հ.Մ.Ը.Մ.ի կարեւոր նպատակներէն մէկն է: Ապա, ան ներկայացուց օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ներկայացուցիչ՝ Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Արտակ Քհնյ. Տէմիրճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Մհեր Դաւիթեան եւ Մանուէլ Մարսէլեան, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան ՅՆՐԳ Մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Յովսէփի եւ Էլիզապէթ Պոյաճեաններ, Կլէնտէյլի քաղաքապետ Տէյվ Ուիվըր, Կլէնտէյլ քաղաքի քարտուղար Արտաշէս Քացախեան, Կլէնտէյլի միացեալ վարժարաններու խորհուրդի անդամ Կրէկ Գրիգորեան, Կլէնտէյլ Գոլֆֆի հոգաբարձութեան անդամ Վահէ Փիրումեան, մարզախաղերուն մասնակցած հայկական վարժարաններու տնօրէն-տնօրէնուհիներ եւ բազմաթիւ այլ հիւրեր:

Ապա, մարզադաշտ ներկայացաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը, գլխաւորութեամբ եղբ. Վարդան Ասատուրեանի, որ իր ազգայնաշունչ եղանակներով թնդացուց մարզադաշտը, մեծ ոգեւորութիւն ստեղծելով ներկաներուն մօտ:

Դրօշակի տպաւորիչ արարողութիւնը կատարեցին Հ.Մ.Ը.Մ.ի Պրըպէնքի «Սիփան» մասնաճիւղի արի-արեւոյշները, որոնք կարգապահ քայլուածքով մարզադաշտ ներկայացուցին Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշները, բարեկեցին ներկաները եւ տեղադրե-

ցին զանոնք մարզադաշտին վրայ որոշուած վայրը: Քայլերգները նուազեց Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը:

Այնուհետեւ, տողանցեցին մարզախաղերուն մասնակցող հայկական 12 վարժարաններու աշակերտ-աշակերտուհիները իրենց մարզիչներուն առաջնորդութեամբ: Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին խրախուսիչ եղանակներով, հպարտութեամբ եւ յոյս ներշնչելով քալեցին Ռոզ եւ Ալէք Փիլիպոս, Արի Կիրակոս, Հայ Քոյրերու, Արշակ Տիգրանեան, Յովսէփեան, Շամլեան, Սահակ Մեսրոպ, Ֆերահեան, Հ.Բ.Ը.Մ-ի Մանուկեան-Տէմիրճեան, Մերտինեան, Միլիթրեան եւ Մեսրոպեան ազգային եւ հայկական վարժարաններու աշակերտները, բարե-

ւեցին ներկաները եւ անոնց երկարաշունչ ծափողջոյններուն արժանանալէ ետք, գրաւեցին իրենց տեղերը մարզադաշտին վրայ: Առաջին անգամ ըլլալով, այս մարզախաղերուն ներկայ էր Արշակ Տիգրանեան վարժարանը, որուն մասնակցութիւնը մեծապէս գնահատելի էր:

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց մարզական պատասխանատու եղբ. Ժանօ Քահվէճեան, որ առաջին հերթին շնորհաւորեց ՔԱ.Հ.Ա.Մ-ի յաղթական աւարտը եւ ըսաւ. «23 յաջորդական տարիներ շարունակ բոլորս հպարտանքը ապրեցանք եւ պիտի շարունակենք ապրիլ, ի տես շրջանի հայ աշակերտութեան արձանագրած մարզական

ՔԱ.Յ.Ա.Մ.Ի 2007Ի ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ

Ստորեւ՝ պասքեթպոլի, ֆութպոլի եւ վոլիպոլի մրցումներուն ախոյեան հանդիսացած վարժարանները դասարանային բաժանումներով:

ՊԱՍԵԹՊՈԼ

2. ՂԱՍԱԿԱՐԳ (3ՐԴ ԵՒ 4ՐԴ ՂԱՍԱՐԱՆՆԵՐ)

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Շամլեան Ազգ. Վարժարան(1)
- ՄԱՆՉԵՐ
- Յայ Զոյրերու Վարժարան

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Յ.Բ.Ը.Մ.Ի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան
- ՄԱՆՉԵՐ
- Սահակ Մեսրոպ Վարժարան

Ե. ՂԱՍԱԿԱՐԳ (5ՐԴ ԵՒ 6ՐԴ ՂԱՍԱՐԱՆՆԵՐ)

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Ֆերահեան Ազգ. Վարժարան
- ՄԱՆՉԵՐ
- Յայ Զոյրերու Վարժարան

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Շամլեան Ազգ. Վարժարան
- ՄԱՆՉԵՐ
- Սահակ Մեսրոպ Վարժարան

Դ. ՂԱՍԱԿԱՐԳ (7ՐԴ ԵՒ 8ՐԴ ՂԱՍԱՐԱՆՆԵՐ)

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Սահակ Մեսրոպ Վարժարան
- ՄԱՆՉԵՐ
- Յովսէփեան Վարժարան

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Ֆերահեան Ազգ. Վարժարան

- ՄԱՆՉԵՐ
- Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. Վարժարան

ՖՈՒԹՊՈԼ

2. ՂԱՍԱԿԱՐԳ (3ՐԴ ԵՒ 4ՐԴ ՂԱՍԱՐԱՆՆԵՐ)

- ՄԱՆՉԵՐ
- Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. Վարժարան

Ե. ՂԱՍԱԿԱՐԳ (5ՐԴ ԵՒ 6ՐԴ ՂԱՍԱՐԱՆՆԵՐ)

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Սահակ Մեսրոպ Վարժարան
- ՄԱՆՉԵՐ
- Յ.Բ.Ը.Մ.Ի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան(2)

Դ. ՂԱՍԱԿԱՐԳ (7ՐԴ ԵՒ 8ՐԴ ՂԱՍԱՐԱՆՆԵՐ)

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. Վարժարան
- ՄԱՆՉԵՐ
- Յ.Բ.Ը.Մ.Ի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան

ՎՈԼԻՊՈԼ

Ե. ՂԱՍԱԿԱՐԳ (5ՐԴ ԵՒ 6ՐԴ ՂԱՍԱՐԱՆՆԵՐ)

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Ֆերահեան Ազգ. Վարժարան
- ՄԱՆՉԵՐ
- Շամլեան Ազգ. Վարժարան

Դ. ՂԱՍԱԿԱՐԳ (7ՐԴ ԵՒ 8ՐԴ ՂԱՍԱՐԱՆՆԵՐ)

- ԱՂԶԻԿՆԵՐ
- Ֆերահեան Ազգ. Վարժարան
- ՄԱՆՉԵՐ
- Շամլեան Ազգ. Վարժարան



յաղթանակներուն: Յաղթանակներ, որոնք ո՞վ գիտէ ի՛նչ աստղերու ծնունդ պիտի տան եւ պիտի ծաղկեցնեն հայրենակարօտ մեր սրտերը»:

Ապա, մարզախաղերու նպատակին վրայ կեդրոնանալով, եղբայրը բացատրեց, թէ անոնք կը նպատակադրեն համախումբել շրջանի հայ աշակերտութիւնը, անոր համար մարզական մաքրամաքուր միջնորոտ ստեղծել եւ ինչո՞ւ է, անոր ծանօթացնել նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը, որուն դուռները միշտ բաց են բոլորին առջեւ:

Եղբայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց մրցումներուն մասնակցող հայկական վարժարաններու մարզիչներուն, տնօրէններուն եւ ծնողներուն, որոնք համբերութեամբ հետեւեցան եւ մարզադաշտեր առաջնորդեցին մրցող աշակերտ-աշակերտուհիները ու բաժնեկից դարձան անոնց նուաճումներուն:

Մարզախաղերուն մասնակցող վարժարաններու տնօրէններուն կողմէ պատգամ փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի տնօրէն Յակոբ Յակոբեան: Ան ողջունելով աշակերտական եզակի այս նախաձեռնութիւնը ըսաւ. «Տարուէ տարի այս ձեռնարկը արդէն վերածուած է յատկանշական աւանդութեան: Արդարեւ, ժողովուրդի մը կեանքին մէջ աւանդութիւնները կրկնուելով կը դառնան անբաժան մէկ մասը անոր հաւաքական գիտակցութեան: Եւ ազգային ինքնութեան ամրապնդման համար, մանաւանդ երկրորդ-երրորդի ազգային դաստիարակութեան կենսական գործին մէջ հաւաքոյթները ունին հիմնական կարեւորութիւն եւ ՔԱ.Հ.Ա.Մ.ի տարեկան մարզախաղերը իբրեւ այդ, մեր աշակերտ մարզիկներու հայր ինքնագիտակցութիւնը կը զօրացնեն, միաժամանակ մշակելով անոնց նկարագիրը, յարգանքը, իրարու հանդէպ գործակցութիւնը եւ մարզական բարձր ոգին»:

Ապա, բոլորին մտածումներուն թարգմանը հանդիսանալով, Յակոբեան բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ ՔԱ.Հ.Ա.Մ.ի յանձնարումներն նախաձեռնութիւնը, ինչպէս նաեւ շնորհակալութիւն եւ գնահատանք յայտնեց հայկական դպրոցներու մարզիչներուն, որոնց երկարաշունչ, անձնուէր աշխատանքին եւ անսահման զոհողութեանց արդիւնքն են այսօրուան արձանագրուած պատուները արդիւնքները: Ան ընդգծեց յատկապէս ծնողներուն նիւթաբարոյական զոհողութիւնները, որպէսզի իրենց սիրասուն գաւակները անմասն չմնան ՔԱ.Հ.Ա.Մ.ի մասնակցելու բացառիկ առիթէն:

Մարզախաղերու մասնակցող բոլոր աշակերտները յաղթական յայտարարելով, Յակոբեան կոչ ըրաւ ներկաներուն բարձր գնահատելու անոնց մասնակցութիւնը եւ քաջալերելու իրենց ճիգերը, այսօր եւ միշտ, որպէսզի անոնք քաջութիւնը ունենան Պարոյր Սեւակի բառերով ամբողջ աշխարհին յայտարարելու. «... Կա՛նք, պիտի՛ լինենք ու դեռ շատանանք...»:

Այնուհետեւ, եղբ. Գահվէճեան Շրջանային Վարչութեան անունով տնօրէն Յակոբեանին յանձնեց յուշանուէր մը, առ ի գնահատանք Հ.Մ.Ը.Մ.ի 23րդ ՔԱ.Հ.Ա.Մ.ին մասնակցութեան եւ հայ աշակերտութեան մարզական առողջ միջավայր մը ստեղծելուն համար: Նոյնանման յուշանուէրներ յանձնուեցան նաեւ ներկայ բոլոր տնօրէններուն:

Ապա, տեղի ունեցաւ այնքան սպասուած ախոյեանութեան բաժակներու յանձնումը: Ախոյեան խումբերու ներկայացուցիչները իրենց յաղթանակի բաժակները հպարտութեամբ ստանձնեցին Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանի, եղբ. Ժանօ Գահվէճեանի եւ Շրջանային Մարզական Խորհուրդի ներկայացուցիչ քոյր Սօսի Շանլեանի ձեռամբ:

Հանդիսութեան վերջին բաժնով, իր օրհնութիւնները փոխանցեց Արտակ Քչնյ. Տէմիրճեան: Ան առաջին հերթին բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը եւ շեշտեց անոր սրբազան առաքելութիւնը հայկական գաղութներէն ներս: Իսկ մարզախաղերուն մասնակցած 12 հայկական վարժարանները Յիսուսի 12 առաքեալներուն նմացնելով, ան վստահեցուց, որ անոնք հայ ժողովուրդին մէջ գործելով, անոր գաւակները հայօրէն կը դաստիարակեն եւ առողջ միջնորոտ մը կը ստեղծեն անոնց: Քահանայ Հայրը յատկապէս շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը՝ ազգանպաստ իր գործունէութեան համար: Վերջապէս, ան փոխանցեց Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի անսահման օրհնութիւններն ու շնորհաւորանքները:

Հանդիսութիւնը վերջ գտաւ «Հայր Մեր»ի խմբային աղօթքով: Հայկականութեամբ լեցուած՝ ներկաները մեկնեցան տուն, յաջորդ տարի յաւելեալ պատրաստակամութեամբ մասնակցելու նոյն մարզախաղերուն:

Շարք մը վարժարաններէ ֆուլթայլի եւ յատկապէս պասթիլի մրցումներուն մասնակցեցան նաեւ առաջին եւ երկրորդ դասարաններու աշակերտները: Է. դասակարգ նկատուող այս դասարաններու աշակերտները տարիքով եւ հասակով շատ փոքր ըլլալով, առ ի քաջալերանք, բոլորն ալ ստացան ախոյեանութեան բաժակներ:



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը այցելեց Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարան եւ հանդիպում մը ունեցաւ նոր հիւպատոս Արմէն Լիլոյեանի հետ: Հիւպատոսարանի պաշտօնէտութենէն հանդիպումին ներկայ գտնուեցաւ տիկ. Արմինէ Պալեան:

Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչները հիւպատոս Լիլոյեանը շնորհաւորեցին իր նոր եւ պատասխանատու պաշտօնին նշանակման առիթով եւ լաւագոյն մաղթանքներ փոխանցեցին անոր: Խօսակցութեան նիւթ հանդիսացան հայ երիտասարդութիւնը յուզող բազմաթիւ հարցեր, որոնց կարգին՝ հայեցի առողջ դաստիարակութիւնը, որուն մէջ մեծ դեր ունի Հ.Մ.Ը.Մ-ը: Ապա, գլխաւոր հիւպատոսին մանրամասն զեկուցում մը տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքներուն մասին:

Հիւպատոս Լիլոյեան բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը եւ ընդգծեց Հայրենիք-Սփիւռք կապերու ամրապնդման եւ յատկապէս հայ երիտասարդութիւնը Հայրենիքին կապերու կարեւորութիւնը: Ան պատրաստակամութիւն յայտնեց օգտակար հանդիսանալու այս եւ այլ կարեւոր նպատակներու իրականացման:

Այս գծով Շրջանային Վարչութիւնը ընդգծեց, թէ հակառակ հայ երիտասարդութեան դիմագրաւած բազմաթիւ դժուարութիւններուն, Հ.Մ.Ը.Մ-ը հայրենիքի անկախացու-



մէն ի վեր մօտէն կը գործակցի հայրենի երիտասարդութեան հետ, Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ-ի միջոցով, շրջանի նախաձեռնած աշխատանքներով եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Համա-Հ.Մ.Ը.Մ-ական ընդհանուր բանակումներով, ինչպէս նաեւ Համահայկական խաղերու մասնակցութեամբ:

Մեծ գոհունակութեամբ եւ գործակցելու պատրաստակամութեամբ, Շրջանային Վարչութիւնը հրաժեշտ տուաւ հայկական հիւպատոսարանին, Հ.Մ.Ը.Մ-ը յատկանշող յուշանուէր մը յանձնելէ եւ հիւպատոս Լիլոյեանին հետ խմբանկար մը նկարուելէ ետք:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ Կ'ՕԺՏՈՒԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՂՋԿԱՆՑ ԽՈՒՄԲՈՎ

Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի մասնաճիւղի այս տարեշրջանի նորութիւններէն է ֆուտպոլի աղջկանց խումբը, որ քանի մը ամսուան կեանք ունի: Խումբին մաս կը կազմեն 14 քոյրեր, որոնք շաբաթը երկու անգամ՝ Երկուշաբթի եւ Հինգշաբթի օրերը իրենց փորձերը կը կատարեն Քառն Եփփէ Ազգային Ճեմարանի ֆուտպոլի դաշտին վրայ:

Նորաստեղծ ֆուտպոլի խումբը կը կոչուի «Սօսէ»: Խումբին պատասխանատուն է քոյր Լենա Նազարեան: Մարզիչ-

ներն են՝ եղբայրներ Եղիա Տիչոյեան եւ Վան Ալեքսանեան: Ստորեւ՝ խումբին անուանացանկը-
Քոյրեր Նաթալի Թաթոսեան, Դալար Մաթոսեան, Դալար Քիւփէյեան, Դալար Աշճեան, Յոյր Ապաճեան, Արազ Աւագեան, Մէլլի Հաժար, Միրնա Մինասեան, Ռիթա Մինասեան, Սարինէ Գալուստեան, Թային Գալուստեան, Գարօլին Առաքելեան, Մեղրիկ Քէհէեան եւ Մեղրիկ Տնտրեան



Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՈՒԷՏԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ՍԹՈՔՆՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ.ի Շուէտի մասնաճիւղին տարեկան բանակումը տեղի ունեցաւ 24 Յունիս-1 Յուլիս 2007, Կոթլանտ Վիսպիի Սթրանտպի բանակավայրին մէջ: Եօթնօրեայ բանակումին մասնակցեցան 33 սկաուտներ եւ 7 պատասխանատուներ: Բանակումին ընդհանուր պատասխանատուն էր եղբ. Ալեքս Շառոյեան: Իրեւել խմբապետ Ֆրանսայէն Շուէտ հրաւիրուած էր եղբ. Հրաչ Արպաչ:



Ծրագրուած էին սկաուտական գիտելիքներ, դաստիարակչական զանազան աշխատանքներ, խաղեր, մրցումներ, արշաւներ, այցելութիւններ եւ ձեռագլին աշխատանքներ:

Բանակումին առաջին երկու օրը յատկացուեցաւ բանակավայրի դասաւորման, սկաուտական գիտելիքներու եւ կարգապահական որոշ վարժութիւններու փոխանցման, իսկ մնացեալ օրերուն կիրարկուեցաւ վերոնշեալ յայտագիրը:

Տեղին է նշել, որ բոլոր բանակողները, անխտիր, իրենց մասնակցութիւնը բերին բանակումի յաջողութեան: Բանակումի ընթացքին ստեղծուեցաւ մէկ կողմէ ուրախ եւ հարազատ, իսկ միւս կողմէ կարգապահ ու դաստիարակչական մթնոլորտ: Սկաուտները վայելեցին սկաուտական եւ միութեանական յայտագիրներով լեցուն շաբաթ մը:

Բանակումին փակման խարուկահանդէսը տեղի ունեցաւ մեծ խանդավառութեամբ: Խարուկահանդէսը սկսաւ «Մեր հայրենիք» քայերգով: Սկաուտները ներկայացուցին կանչեր, երգեր եւ զաւեշտական թատերերգութիւն: Խարուկահանդէսը շարունակուեցաւ պարով եւ ցնծութեամբ:

Բանակումը ավարտեցաւ «Յտեսութիւն» երգով: Սկաուտները յուզուած եւ բարի տրամադրութիւններով վերադարձան իրենց տունները, մօտ ապագային դարձեալ հաւաքուելու յոյսով:



ԱՐԵՎԵՍԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՍՆԱԳԻՂԱՅԻՆ ՄԱՐԶԱՍԿՆԵՐԸ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ ՊԱՍԿՈՒԵՅԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅԱԳԹԱՆԱԿՈՎ

Թղթակից ՊՈՍԹԸՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Միացեալ Նահանգներու միջ-մասնաճիւղային 17րդ մարզախաղերը տեղի ունեցան 30 Յունիսէն 4 Յուլիս 2007, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան, հովանաւորութեամբ Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զորոյեանի, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան

անդամ եղբ. Վահրամ Դանիէլեանի եւ հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Տիթորոյթի մասնաճիւղին:

Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան մարզախաղերը առիթ մըն են սատարելու միութեան վսեմ նպատակին, երբ շրջանի 10 մասնաճիւղերէն, եւ հիւրաբար Գանատայէն ժամանած Հ.Մ.Ը.Մ.ականներ, Հ.Մ.Ը.Մ.ի շունչով եւ ոգիով գօտեպնդուած, կը հաւաքուին միջ-մասնաճիւղային խաղերու դրօշին տակ, մրցելու հայկական ազնիւ ոգիով, ստեղծելու խանդավառ միջնորդող մը, ծառայելու «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին,

միշտ ի մտի ունենալով, որ նման խաղերէն յաղթական դուրս պիտի գայ Հ.Մ.Ը.Մ.ը:

Միշիկըն նահանգի Լեւոնիա քաղաքին մէջ կազմակերպուած այս խաղերուն իրենց մասնակցութիւնը բերին շրջանի 8 մասնաճիւղերը: Նիւ Եորք, Նիւ Ճորճի, Շիքագօ, Ուաշինկթըն, Պոսթըն, Տիթորոյթ, Փրովիտընս եւ Ֆիլատելֆիա: Մասնակցեցան նաեւ Գանատայի շրջանէն Թորոնթոյի եւ Մոնթրէալի մասնաճիւղերը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ



Խաղերուն պաշտօնական բացումը տեղի ունեցաւ տեղւոյն քաղաքապետարանին դիմաց, դրօշակի յատուկ արարողութեամբ, մասնակցութեամբ քաղաքապետարանի շեփորախումբին, ներկայութեամբ քաղաքապետ Ճէք Էնկըրեսթընի, Տիթորոյթի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հօր՝ Տարօն Քհնյ. Ստեփանեանի, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վարուժ Ճինտոյեանի, Շրջանային մարզական յանձնախումբի, Տիթորոյթի մասնաճիւղի վարչութեան եւ խաղերու կազմա-



կերպիչ յանձնախումբի ներկայացուցիչներուն: Այս առիթով խօսքեր արտասանեցին քաղաքապետը, Քահանայ Հայրը եւ եղբ. Վարուժ Ճինտոյեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԵՒ ԽՐԱՍՏԱՆՔՆԵՐ

Բոլոր մարզիկները եւ սկաուտները խումբ առ խումբ ժամանեցին «Մարիոթ Լեւոնիա» պանդոկ, ուր տեղի ունեցաւ մասնաճիւղերու պատասխանատուններու կարճ ժողով մը, բացատրելու համար մարզախաղերու դասաւորումը, օրէնքները եւ կարգապահական խտտապահանջ պայմանները:

Շաբաթ, 30 Յունիսի կէսօրին տեղի ունեցաւ կողմի մրցաշարքը, մասնակցութեամբ 65 Հ.Մ.Ը.Մ. ակաւններու եւ համակիրներու: Այս խաղերուն յաջորդեցին լողի մրցումները, որոնք առաջին անգամ ըլլալով կը կազմակերպուէին շրջանի միջ-մասնաճիւղային մարզախաղերուն: Լողի մրցաշարքը մեծ խանդավառութիւն ստեղծեց մարզիկներուն, ծնողներուն եւ ներկայ համակիրներուն մօտ:

Կիրակի, 1 Յունիսի առաւօտեան, երկու տարբեր դպրոցներու դաշտերուն վրայ սկսան խմբային խաղերը, եւ Երկուշաբթի 2 Յունիսի կէսօրին տեղի ունեցան ակթլեթիկ միջ-մասնաճիւղային խաղերը: Մօտաւորապէս 525 մարզիկ-մարզիկուհիներ, ծիւ, փոքր, կրտսեր, երէց եւ վեթեւան դասակարգերով, իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ մարզախաղերուն.- Փութպոլ՝ 12 խումբեր, վոլիպոլ՝ 7 խումբեր, պասքեթպոլ՝

45 խումբեր, ընդհանուր 64 խումբեր եւ 98 խմբային խաղեր: Անհատական մարզական խաղերուն մասնակցեցան ակթլեթիկ մի 250 մարզիկներ եւ լողի 95 մարզիկներ: Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ-մարզիկուհիները մարզական ոգիով շարունակեցին բոլոր մրցումները մինչեւ Երեքշաբթի, 4 Յունիս, վայելելով Տիթրոյթի մասնաճիւղին սրտբաց հիւրասիրութիւնը: Տեղին է յիշել խաղերու կազմակերպիչ յանձնախումբի տարած անձնուէր աշխատանքը, որ արժանացաւ բոլորին գնահատանքին:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՐԵԿՈՒՆԵՐ

Շաբաթ երեկոյեան տեղի ունեցաւ պարանցիկ երեկոյ, ընկերակցութեամբ՝ ձայնի հաղորդավար Շանթ Գասպարեանին եւ ռումանթիկ երեկոյ, ընկերակցութեամբ՝ ջութակահար Հէրի Յովակիմեանին: Կիրակի երեկոյեան տեղի ունեցաւ պարահանդէս, հայկական ժողովրդային նուագախումբի ընկերակցութեամբ: Իսկ Երկուշաբթի երեկոյեան տեղի ունեցաւ պարահանդէս, մասնակցութեամբ սիրուած երգիչներ Հրանդի եւ Սամի, ընկերակցութեամբ «Արարատ» նուագախումբին:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ էղբ. Վահրամ Դանիէլեան

ՅԱՂԹԱՆԱԿ ԸՆԿԵՐՈՅԹՈՒ ՊԱՐԱՀԱՆԳՆԵՐ

Երեքշաբթի, 3 Յունիսի երեկոյեան ժամը 7էն սկսեալ տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը, «Լորէլ Մէնըր Լեւոնիա» շքեղ սրահին մէջ: Պաշտօնական բաժինը բացուեցաւ պատուոյ հիւրերու մուտքով: Ներկայ էին 1200է աւելի Հ.Մ.Ը.

Մ.ակաւններ եւ համակիր ազգայիններ, որոնք ապրեցան յիշատակելի երեկոյ մը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին հետ: Պատուոյ սեղանին վրայ ներկայ էին Արեւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Տ. Օշական Արք. Չորոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ էղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հայկ Օշական, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ էղբ. Վահէ Թանաշեան, խաղերու պատուոյ նախագահներ՝ Հէրի եւ Լուսի Պուտաբեաններու աւանդի աւանդապահներ՝ տէր եւ տիկին Բիլլ եւ Անահիտ Սիրեան, Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ էղբ. Արմէն Կէտիկեան, Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյթի մասնաճիւղի վարչութեան ատենապետ էղբ. Շանթ ժամկոչեան եւ խաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ էղբ. Ժազ Տէմիրճեան: Պատուոյ հիւրերէն ներկայ էին ՀՕՄի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Անի Աթթար, Համազգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ Յովսէփ Աւագեան եւ Յովակիմ Մանուկեան եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ճիմ Գիլիրեան: Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան սեղանին ներկայ էին էղբ. Ռոպէրթ Քալանթարի, էղբ. Վազգէն



Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի մարզիկուհիներ:

Լախոյեան եւ եղբ. Վարուժ Ճինտոյեան: Շրջանային մարզական յանձնախումբի եւ խաղերու կազմակերպիչ յանձնախումբի անդամներ: Տիթրոյթի գաղութը կը ներկայացնէին Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տարօն Քհնյ. Ստեփանեան, Կաթողիկէ համայնքի ներկայացուցիչ Թովմաս վարդապետ Կարապետեան եւ Հ.Յ.Դ. «Ազատամարտ» Կոմիտէի ներկայացուցիչ Մայքըլ Յակոբեան:

Հանդիսութեան պաշտօնական բացումը կատարուեցաւ Հայաստանի, Միացեալ Նահանգներու եւ Գանատայի քայլերգներուն կատարողութեամբ:

Սրբազան Հօր սեղանի օրհնութենէն եւ ճաշէն ետք, օրուան յայտագիրը բացւած հռչակուեցաւ հանդիսավար եղբ. Շանթ Ժամկոչեանի կողմէ: Տիթրոյթի մասնաճիւղի վարչութեան անունով խօսք առնելով, ան ներկաներուն բարի գալուստ մաղթեց եւ շնորհակալութիւն յայտնեց խաղերու յաջողութեան նպաստող բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ համակիրներուն:

Առաջին խօսքը առաւ հիւրընկալ մասնաճիւղի խաղերու կազմակերպիչ



Կեդրոնը՝ տէր եւ տիկին Բիդ եւ Անահիտ Սիրեան:

յանձնախումբի ատենապետ եղբ. Ժագ Տէմիրճեան: Եղբայրը յանձնախումբին անունով բարի գալուստ մաղթեց ներկաներուն, իր բարեմաղթութիւնները յայտնելով խաղերուն յաջողութեան համար: Ան շնորհակալութիւն յայտնեց Շրջանային մարզական յանձնախումբ

բին, Տիթրոյթի մասնաճիւղի վարչութեան, օժանդակ բոլոր յանձնախումբերուն եւ բոլոր անոնց, որոնք անսակարկ աշխատեցան խաղերու յաջողութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան

ԱՆՈՅԵԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԽՈՐՈՒՄ

ՄԱՐԶԱՁԵՒ	ՍԵՌ	ՏԱՐԻՔ	ԽՈՒՄԲ	Ա. ԴԻՐՔ	Բ. ԴԻՐՔ	Գ. ԴԻՐՔ
Ֆութպոլ	Տղաք	Երեց	7	Թորոնթօ	Ուաշինկթըն	Պոսթըն
Ֆութպոլ	Տղաք	Կրտսեր	1	Պոսթըն	-	-
Ֆութպոլ	Խառն	Փոքր	4	Պոսթըն	Ուաշինկթըն	Շիքակօ
Վոլիպոլ	Տղաք	Երեց	1	Շիքակօ	-	-
Վոլիպոլ	Աղջիկներ	Երեց	5	Թորոնթօ	Ուաշինկթըն	Շիքակօ
Վոլիպոլ	Աղջիկներ	Վեթերան	1	Շիքակօ	-	-
Պասքէթպոլ	Տղաք	Երեց	11	Փրովիտընս	Նիւ Եորք	Նիւ Ճըրզի
Պասքէթպոլ	Տղաք	Կրտսեր	4	Պոսթըն	Տիթրոյթ	-
Պասքէթպոլ	Տղաք	Պատանի	9	Նիւ Ճըրզի	Թորոնթօ	Տիթրոյթ
Պասքէթպոլ	Տղաք	Վեթերան	5	Պոսթըն	Շիքակօ	Տիթրոյթ
Պասքէթպոլ	Խառն	Փոքր	5	Պոսթըն	Ֆիլատելֆիա	Տիթրոյթ
Պասքէթպոլ	Աղջիկներ	Երեց	4	Մոնթրէալ	Թորոնթօ	Պոսթըն
Պասքէթպոլ	Աղջիկներ	Կրտսեր	2	Տիթրոյթ	Թորոնթօ	-
Պասքէթպոլ	Աղջիկներ	Պատանի	4	Ուաշինկթըն	Տիթրոյթ	Ֆիլատելֆիա
Պասքէթպոլ	Աղջիկներ	Վեթերան	1	Պոսթըն	-	-
Աթլէթ				Տիթրոյթ	Թորոնթօ	Պոսթըն
Լող				Տիթրոյթ	Պոսթըն	Ֆիլատելֆիա

Մասնակից խումբերու ընդհանուր գումար 64:



ներկայացուցիչ եղբ. Վահէ Թանաշեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր՝ իր յարատեւ քաջալերանքին համար: Ան դնահատանքի խօսքեր ուղղեց հիւրընկալ Հ.Մ.Ը.Մ.ի Տիթորոյթի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպիչ յանձնախումբին եւ Շրջանային մարզական յանձնախումբին, իրենց տարած աշխատանքին համար, ինչպէս նաեւ շրջանի տասը մասնաճիւղերու վարչութիւններուն, որոնք հսկայական աշխատանք կը տանին: Ան ջերմազին մաղթանքներ ուղղեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի մասնաճիւղերուն: Եղբայրը նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց պատուոյ սեղանի հիւրերուն, քոյր կազմակերպութիւններուն ներկայացուցիչներուն եւ բոլոր ներկաներուն, որոնք իրենց ներկայութեամբ վկաներ կը դառնան Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակը նշող այս շքեղ ճաշկերոյթ-պարահանդէսին, յաղթանակը աւելի քան 28 հազար անդամ հաշուող եւ 100ի շուրջ մասնաճիւղեր ունեցող հայկական իրականութեան ամենամեծ կազմակերպութեան: Եղբայրը նաեւ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ. իր հզօրութիւնը կը պարտի իր գաղափարաբանութեան հիմնական չորս յատկանիչներուն, որոնք են՝ իր ազգային դիմագիծը, Հ.Մ.Ը.Մ.ի հոմանիչ դարձած բարոյականութիւնը, անդամներու միջեւ տիրող ընտանեկան եղբայրասիրութիւնը եւ միութեանական կարգապահութիւնը: Այս չորս յատկութիւնները եղան Հ.Մ.Ը.Մ.ի ուժին աղբիւրը եւ անոնց մէջ կը խտանայ Հ.Մ.Ը.Մ.ի յառաջդիմութեան գաղտնիքը: Հետեւաբար, եղբայրը բոլոր



Հ.Մ.Ը.Մ.ականներէն պահանջեց արթուն պահակները ըլլալ միութեան գաղափարաբանութեան, որպէսզի միշտ կը յաղթէ Հ.Մ.Ը.Մ.ը եւ միշտ կը յաղթէ հայութիւնը:

Հ.Յ.Դ. Արեւելեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէին կողմէ խօսք առաւ Հայկ Օշական: Ան իր խօսքին մէջ ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի հաստատաբայ երթը շրջանին մէջ եւ նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ի սկստուներուն եւ մարզիկներուն տողանցքը դիտելով անոնց մէջ կը տեսնենք Մայր Հայաստանի հողին վրայ տողանցող Հայ գինուորը: Ան հաստատեց, որ Դաշնակցութիւնը ամբողջ աշխարհի տարածքին եւ յատկապէս այս շրջանին մէջ թեւ ու թիկունք է Հ.Մ.Ը.Մ.ին, յատկապէս երբ ան դժուարութիւններ կը դիմագրաւէ: «Դժուարութիւններ, գորս ան գիտէ լուծել եւ անոնցմէ վերականգնելի աւելի գօրաւոր, աւելի կազմակերպ, աւելի կարգապահ, ու շարունակելի երթը դէպի յաւելեալ յաջողութիւններ եւ լուսաւոր ապանք»:

Յաջորդ խօսք անունըն էր

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան: Եղբայրը շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր առաքելութիւնը կը շարունակէ, հակառակ իր դիմագրաւած կարգ մը դժուարութիւններուն եւ ապագայանցնող այլազան ազդակներու գոյութեան, որոնք կը փորձեն քանդել ազգային արժէքները, որոնց համար սերունդներ նուիրուած են անսակարկ գոհողութեամբ, բարձր պահելու այդ արժէքները մեր գիտակցութեան մէջ: Ան ըսաւ, որ այսօր, սերունդէ սերունդ փոխանցուած ջահը հասած է մեզի՝ փոխանցելու համար գայն յաջորդ սերունդին՝ անչէջ, եւ բարձր պահելու Հ.Մ.Ը.Մ.ի 89 տարիներու գործունէութիւնը: Եղբ. Դանիէլեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով շնորհակարարեց միջ-մասնաճիւղային մարզախաղերու կազմակերպիչ մարմինները, յանձնախումբերը, մասնակից մարզիկներն ու համակիրները, եւ մաղթեց որ բոլոր ձեռնարկները պսակուին փայլուն յաջողութեամբ: «Հ.Մ.Ը.Մ.ը ծառայութեան հաւատարիմ միութիւն է, ծառայութեան ծնունդ է եւ ինք՝ իրբեւ կերտիչ, ինչպէս նաեւ համեստ ու խոնարհ ծառայողներու բանակ, կը ծառայէ իր անսակարկ ու ոսկետառ նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին», հաստատեց ան:

Վերջին խօսքը արտասանեց Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զորոյեան:

ԽՈՒՄԲԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ				
ՄԱՍՆԱՃԻՂ	Ա.	Բ.	Գ.	ԿԵՏ
1. Պոսթըն	6	1	3	59
2. Տիթորոյթ	3	2	3	43
3. Շիքակօ	2	1	2	27
4. Ուաշինկթօն	1	3	0	22
5. Ֆիլատելֆիա	0	1	2	13
6. Նիւ Ճրքզի	1	0	1	11
7. Փրովիտընս	1	0	0	7
8. Նիւ Եորք	0	1	0	5
9. Թորոնթօ	2	4	0	34
10. Մոնթրէալ	1	0	0	7

Սրբազան Հայրը խօսքը երիտասարդութեան ուղղելով, շնորհակարարեց միջ-մասնաճիւղային 17րդ մարզախաղերու յաջողութիւնը եւ յիշեցուց, որ զանազան կազմակերպութիւններ եկած ու գացած են, բայց Հ.Մ.Ը.Մ.ը 28 Մայիս 1918ի պայքարէն ու մեր ժողովուրդի ծոցէն ծնած, կը մնայ միշտ երիտասարդ: «Հ.Մ.Ը.Մ.ի սկզբունքները եւ մեր ազգային սրբութիւնը շունչ եւ արիւն տուած են մեզի եւ մեր բոլորին պարտականութիւնն է պահպանել զանոնք», ըսաւ Սրբազան Հայրը: Ան յիշեց իր պատանեկան տարիները, երբ իբրեւ գայլիկ եւ սկաուտ կը կերտուէր Հ.Մ.Ը.Մ.էն ներս, ապա ըսաւ. «Հաւատացիմք այս ընտանիքին, որ հարազատ է մեր ժողովուրդի նկարագրին, Հ.Մ.Ը.Մ.ը մերն է ու կը պահէ մեզ»: Ան շարունակեց ըսելով, որ այս օտար աստիճան վրայ Հ.Մ.Ը.Մ.ը կը մնայ հայ ազգի սեփականութիւնը եւ այսօր անոր դրօշը կը ծածանի աշխարհի բոլոր ծագերուն:

Այս առթիւ շնորհակարարական յատուկ յուշատախտակ մը յանձնուեցաւ Շրջանային մարզական յանձնախումբի ատենապետ՝ Տիթրոյթի մասնաճիւղի

անդամ եղբ. Արամ Կաւուրին եւ խաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Ժագ Տէմիրճեանին՝ իրենց տարած օգտաշատ աշխատանքին համար:

Յայտագրի գործադրութեան աւարտին, ներկաները վայելցին սիրուած երգիչ Արմէնչիկը եւ իր նուագախումբը, որոնք ներկաները խանդավառեցին ժողովրդային ճոխ երգերով: Կէս գիշերէն ետք, յեղափոխական երգերու անգուգական մեկնաբան Գառնիկ Սարգիսեան, իր նուագախումբով, միջնորդ տը աւելի եւս խանդավառեց ազգային-յեղափոխական երգերով:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

Չորեքշաբթի, 4 Յուլիսի առաւօտեան ժամը 11.30ին տեղի ունեցաւ մարզախաղերու փակման հանդիսութիւնը, Սթիվընսըն Հայ Սքուլի մարզադաշտին վրայ: Օրուան հանդիսավարներն էին քոյր Թամիցա Տաքէսեան եւ եղբ. Շանթ Ժամկոչեան: Փակման հանդիսութեան տողանցքին, դրօշակիրներու առաջնորդութեամբ տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի 8 մասնաճիւղերու արի-արեւոյշներու, արծուիկներու եւ գայլիկներու խումբերը, եւ խաղերու մասնակցող 10 մասնաճիւղերու մարզիկները: Յատուկ խանդավառութիւն ստեղծեց խաղերու կազմակերպիչ յանձնախումբի եւ օժանդակ յանձնախումբերու անդամներուն մուտքը դաշտ: Ներկաները յոտնկայս ծափողոյններով ողջունեցին զանոնք:

Քոյր Թամիցա ներկայացուց օրուան պատուոյ հիւրերը՝ Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Կէտիկեան, ՀՕՄի Արեւելեան Շրջանի ներկայացուցիչ Անի Աթթար եւ Համագ-

գայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Յովսէփ Աւագեան:

Այս առթիւ խօսքեր արտասանեցին Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Ռոպէրթ Քալանթարի, ՀՕՄի եւ Համագայինի ներկայացուցիչները, Տիթրոյթի Հայ Մշակութային Կեդրոնի կազմակերպութիւններու անունով Հ.Յ.Դ. «Ազատամարտ» Կոմիտէի անդամ Անդրանիկ Գարատոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան եւ Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան: Խօսք առնողները բարձր գնահատեցին Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայապահպանման աշխատանքին մէջ եւ նորանոր յաջողութիւններ մաղթեցին մարմնակրթական այս կազմակերպութեան:

Փակման հանդիսութեան աւարտէն առաջ տեղի ունեցաւ արտոյեան խումբերու բաժակներու բաշխումը:

Մեծ խանդավառութիւն ստեղծեց Տիթրոյթի Համագայինի պարախումբը:

Յիշատակելի երեւոյթ էր Տիթրոյթի մասնաճիւղի վարչութեան մէկ նախաձեռնութիւնը, ուր վարչութեան որոշումով յառաջացաւ յատուկ բաժակ մը՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյթի մասնաճիւղի հաւատաւոր մարզիկ եւ վարչական՝ վաղամեռիկ քոյր Լիլիան Տէր Մովսէս-Գլարքի յիշատակին: Բաժակը պիտի յատկացուի միջ-մասնաճիւղային խաղերուն Տիթրոյթի մարզիկներէն ամէնէն օրինակելի մարզիկին: Այս տարուան խաղերու բաժակին արժանացաւ եղբայր Փօլ Դաւիթեան:

Կէսօրուան ժամը 1ին, տողանցքով փակուեցան միջ-մասնաճիւղային 17րդ խաղերը՝ անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակով: Այս խաղերով Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանը յաւելեալ խթան մը ստացաւ, խաղերուն մասնակցող Հ.Մ.Ը.Մ.ականները ձեռով մը վերանորոգեցին իրենց ուխտը, աւելի զօրաւոր կամքով շարունակելու «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ի ուղին, յուսալով որ 2008ի միջ-մասնաճիւղային 18րդ մարզախաղերը վերանորոգուած եռանդով կը կատարուին Շիքալոյի մէջ:



ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Սգակիր մը
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

Արդէն վեց ամիս անցած է այն օրէն, երբ եղբ. Յակոբ Գարակէօզեան դացած է միանալու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ երախտաւորներու պանթէոնին, անակնկալ հրաժեշտ տալով իր հարազատներուն, միութեանական-կուսակցական ընկերներուն եւ իր պաշտած ու ծառայած ժողովուրդին:

Լիբանանի մէջ ո՞վ չէր ճանչնար եղբ. Յակոբ Գարակէօզեանը, «Մարգիկ»ի երկարամեայ ցրուիչը, Փոլիթպոլի միջազգային իրաւարարը, Հ.Մ.Ը.Մ.ի ժըտէյտէի մասնաճիւղի ատենի վարչականը եւ Փոլիթպոլի խումբերու վարչական պատասխանատուն:

Շատեր տակաւին չեն հաշտուած այն դաղափարին հետ, որ եղբ. Յակոբին նման եռանդուն Հ.Մ.Ը.Մ.ականի մը սիրտը կրնար օրին մէկը անսպասելիօրէն կանգ առնել: Իսկ ի՞նչպէս չյօգնէր այդ սիրտը, որ Հ.Մ.Ը.Մ.ին հետ ու Հ.Մ.Ը.Մ.ին համար բաբախեցաւ աւելի քան 50 տարի:

Արդարեւ, եղբ. Յակոբ Գարակէօզեան իր պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը անցուց Հ.Յ.Դ.ի դաղափարական յարկին եւ Հ.Մ.Ը.Մ.ի հայաչունչ միջնորդորտին մէջ: Եղաւ մարգիկ, իրաւարար, վարչական ու մանաւանդ տնտեսական ձեռնարկներու փնտռուած կազմակերպիչ: Ունեցաւ բազմաթիւ ծանօթներ եւ տարիներու ընթացքին իր ծանօթութիւններուն շնորհիւ ընդլայնեց «Մարգիկ»ի ցրուիչի իր հանգամանքով: Եղան Տարիներ, երբ ան, առանձինն, ամսական 1600 «Մարգիկ» սպառեց: Այլ խօսքով՝ ան ամսական 1600 բաժանորդ ունեցաւ, 1600 հայորդիի տունը կամ գործատեղը այցելեց եւ առանց մերժումի հանդիպելու, իրեն յատուկ ոճով, համոզիչ խօսքով ու կեցողածքով Հ.Մ.Ը.Մ.ի խօսքը փոխանցող եւ գործը ծանօթացնող հրատարակութիւնը հասցուց ամէնուրեք:

Եղբ. Յակոբ կը պատկանէր Հ.Մ.Ը.Մ.ի ժըտէյտէի մասնաճիւղի հիմնադիր սերունդին (Պետրոս Շեմմեսեան, Գէորգ Աւընեան, Հրանդ Պետրոսեան, Նիկողոս Մարունեան, Գէորգ Ալաճաճեան...): 1974-1982 ան եղած է մասնաճիւղի վարչական եւ ստանձնած է Փոլիթպոլի երկրորդական խումբերու պատասխանատուութիւնը: 1982ին ստանձնած է մասնաճիւ-

ղին ատենապետութիւնը: Աւելի ուշ, 1986ին ան մաս կազմած է մասնաճիւղի պասքեթպոլի դաշտի շինութեան յանձնախումբին:

Շրջանային մակարդակի վրայ, 1980ականներու կէսերէն սկսեալ, եղբ. Յակոբ մաս կազմած է Լիբանանի Փոլիթպոլի ներկայացուցչական խումբերու յաջորդական վարչական կազմերուն: Եղած է գոյքապահ եւ օգնական: Մասնակցած է բազմաթիւ Շրջանային Ժողովներու, իր տեւական մտահոգութեան առանցքը դարձնելով Հ.Մ.Ը.Մ.ի Փոլիթպոլը:

Մեծ է եղբ. Յակոբին երախտիքը «Մարգիկ» ամսաթերթի տարածման մէջ: Շուրջ քսան տարի, 1984-2004, ան եղած է թերթին ցրուիչը Լիբանանի մէջ: Ամէնէն դժուարին պայմաններու մէջ նոյնիսկ ան թերթը ցրուած է պարտաճանաչ կերպով:

Վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, եղբ. Յակոբ հաւատաւոր Դաշնակցական մըն էր եւ հայ ժողովուրդի իրաւունքներու ջերմ պաշտպան մը: Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն ան կարեւոր նպաստ ունեցած է իր շրջանի՝ Ամանոս թաղամասի հայութեան պաշտպանութեան գործին:

Հողը թեթեւ գայ վրադ եղբ. Յակոբ: Խուսկ ու մոմ քաղցր յիշատակիդ:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Պերճ Տաքէսեան (Ամման) \$ 300
- Յարութիւն Մառուկեան (Պուէնոս Այրէս) \$ 200
- Երուանդ Գազանճեան (Նիւ Եորք) \$ 100

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Գեղամ Սիսեռեանի մահուան առիթով՝
Տէր եւ տիկ. Ծանթ եւ Ռիթա Ալեքսանտրեան
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կը նուիրեն \$ 500

ԵՂԲ. ՊԵՏՐՈՍ ԲԱՆԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ (ՊԵՏՈՆԸ)

**Կարպիս Գույումճեան
ԱԹԷՆՔ**

Աշնանային տերեւաթափը կանգ չէ առած: Հ.Մ.Լ.Մ.ի Աթէնքի վեթերան եղբայրներ փանոս Գարամանեանի, Աբրահամ Գոճայեանի եւ Պօղոս Օղլուխեանի կեանքէն հեռացումէն ետք, վերջերս, անողոք ու կարճատեւ հիւանդութենէ ետք կեանքին հրաժեշտ տուաւ նաեւ եղբայր Պետրոս Բանիկեանը (Պետոն):

Եղբայր Պետրոսին յուղար-

կաւորութիւնը տեղի ունեցաւ Նէոս Գոգմոսի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, հանգուցեային հարազատներու, պարագաներու եւ Հ.Մ.Լ.Մ.ականներու ներկայութեամբ:

Եղբայր Պետրոս ծնած էր Ֆիքսի հայ գաղթակայանը, 1939ին: Ան յաճախած էր գաղթակայանի ազգային նախակրթարանը եւ փոքր տարիքէն եղած էր Հ.Մ.Լ.Մ.ի Աթէնքի սկառուտ, ապա՝ պասքեթպոլի եւ շրջան մըն ալ Ֆուլթոնի խաղացող:

Եղած էր պարտաճանաչ ու գիտակից իր պարտականութեանց մէջ:

1959ին, յունական մարզական առաջնակարգ «Աթլիթիքի Իխօ» օրաթերթի խմբագրութեան կազմակերպած 5000 մեթր վազքի մրցումին, եղբայր Պետրոս Հ.Մ.Լ.Մ.ի դրօշով, վազքին 350 մասնակցողներու կարգին, հանդիսաւոր կերպով առաջին հանդիսանալով տիրացաւ օրաթերթի խմբագրութեան առաջնութեան ոսկի մետալին ու բաժակին, մեծ խանդավառութիւն ստեղծելով գաղթակայանի հայութեան մօտ:

Խունկ եւ ծաղիկ քաղցր յիշատակին:



ԵՂԲ. Պ. ԲԱՆԻԿԵԱՆ

*'Made from one single slice
of natural Australian opal'*



Classique®
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199

fax: +61 2 9262 1630

Website: www.classiquewatches.com

Email: Info@classiquewatches.com

ՀԵԹԻԱԹ

ԾՈՅԼ ԱՂՁԻԿԸ

Պատրաստեց՝ Սալբի Լատոյեան
ՊԷՅՐՈՒԹ

Այս հեքիաթին առաջին մասով տեսանք, թէ ինչպէ՛ս քազաւոր մը օրին մէկը, որսի ժամանակ, կը ծանօթանայ երիտասարդի մը, որ կ'ընդունի աշխատանքի վարժեցնել իր վայրի ցուլը: Յուլը կրթելէ եւ աշխատանքի վարժեցնելէ ետք, քազաւորը երիտասարդին կ'առաջարկէ կրթել նաեւ իր ծոյլ աղջիկը: Հետեւաբար, ան աղջիկը կ'ամուսնացնէ երիտասարդին:

Շ ուտով մայրն ու տղան կ'անդրադառնան, որ նոր հարսը շատ ծոյլ, անհոգ աղջիկ մըն է:

Այ տղայ... այս ի՞նչ տեսակ հարս է, կը դժգոհի մայրը, տեսնելով որ աղջիկը չ'աշխատիր...

Մի՛ մտահոգուիր, մայր,- կ'ըսէ տղան,- ես գայն կը կրթեմ, կը խելօքցնեմ, միայն թէ հաց եւ ջուր մի՛ տար հարսիդ: Ո՞վ կ'աշխատի՝ դուն եւ ես. ո՞վ հաց կ'ուտէ՝ դուն եւ ես:

Այդպէս ալ կ'ընեն. իրենք կ'աշխատին, իրենք կ'ուտեն եւ աղջկան բան չեն տար: Մէկ օր կ'անցնի, երկու օր կ'անցնի...

Օր մըն ալ անբան, ծոյլ աղջիկը ոտքի կ'ելլէ, չորս կողմը կ'աւլէ եւ ետ կը նստի:

Իրիկունը տղան մօրը կ'ըսէ,- կրնա՛ս կտոր մը հաց եւ քիչ մը ջուր տալ իրեն:

Յաջորդ օրը աղջիկը տեղէն կ'ելլէ, տան կէսը կ'աւլէ եւ ետ կը նստի: Տղան մօրը կ'ըսէ,- կէս հաց եւ կէս թաս ջուր տո՛ւր իրեն: Աղջիկը կը բարկանայ,- Վո՛ւյ... սատանան գայ տանի ձեզ. հօրս տունը առանց գործ ընելու ես ամէն բան կ'ուտէի... ձեր տունը մինչեւ չաշխատիմ՝ հաց չեմ ստանար:

Յաջորդ օրը ոտքի կ'ելլէ եւ թէ՛ տունը կ'աւլէ, թէ՛ տան առջեւի մասը: Մայրն ու տղան շատ կ'ուրախանան տեսնելով որ իրենց հարսը սկսած է աշխատիլ, տունը եւ սեմը մաքրել:

Առտու մը, թագաւորը թագուհիին կ'ըսէ.- մեր ծոյլ

աղջիկը տուինք այդ տղուն... երթամ նայիմ ի՞նչ եղաւ: Ձին կ'առնէ, կ'երթայ այցելութեան: Կը հասնի փեսային տունը: Աղջիկը ուրախ-գուարթ կը դիմաւորէ գինք, ձիուն գլուխը կը բռնէ, հայրը կ'իջեցնէ ձիէն ու տուն կը տանի...

Այդ օրուան ճաշը միս է եղեր. աղջիկը կը բերէ սխտորը, կու տայ հօրը, որպէսզի կեղուէ.

Կեղուէ՛ հայրիկ, կ'ըսէ, որպէսզի իրիկունը քեզի կերակուր տան, թէ ոչ՝ չեն տար:

Թագաւորը քիթին տակէն կը խնդայ եւ կը սկսի սխտորը կամաց-կամաց մաքրել:

Աղջկան կեսուրը երբ ներս կը մտնէ եւ կը տեսնէ թագաւորը սխտոր մաքրելու վրայ՝ իրարու կ'անցնի...

Վա՛յ կուրնամ ես... ինչո՞ւ սխտորը խնամիիս տուեր ես որ մաքրէ:

Եթէ չաշխատի՝ հաց կու տա՞ք իրեն, կը հարցնէ հարսը...

Կեսուրը խնամիին ձեռքէն կ'առնէ սխտորը եւ կը սկսի ինքը կեղուել:

Իրիկունը տղան գործէն կը վերադառնայ եւ բոլորը միասին լա՛ւ խնճոյք մը կ'ընեն:

Յաջորդ առաւօտ թագաւորը ուրախ-գուարթ պալատ կը վերադառնայ եւ կ'նոջը կ'իմացնէ:

Աչքդ լո՛յս... մեր աղջիկը փոխուեր է:

Թագուհին եւս շա՛տ կ'ուրախանայ եւ հարսն ու փեսան պալատ կը հրաւիրէ. կրկին մեծ խրախճանք կը կ'ընեն միասին եւ շատ ուրախ ժամանակ կ'անցընեն:

Դուք ալ ուրախանաք... դուք ալ ձեր նպատակին հասնիք:

(Շար. 2 Էւ վերջ)



ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐ ՀԷՆ



Դրվիճները կը պատկանին ձուկերու ընտանիքին: Անոնք 10 վայրկեանէն աւելի չեն կրնար մնալ ջուրին յատակը: Պէտք է միշտ ջուրին մակերեսը ելլեն, խորունկ շունչ առնեն եւ ետ մտնեն ջուրին մէջ:

Դրվիճներու հասակը կը հասնի 1.7-4 մեթրի, իսկ կշիռքը՝ 70 քիլո-էն 400 քիլո-ի: Անոնք կ'ունենան 80-100 ակուայ եւ կը սնանին պզտիկ ձուկեր ուտելով:

Դրվիճները ստնաւոր կենդանիներ են եւ շատ լաւ կը լողան: Անոնք ունին երկար կտուց եւ լաւ կը տեսնեն ջուրին մէջ: Անոնք կ'ապրին ծովուն, ինչպէս նաեւ՝ ջուրին մէջ: Անոնք գաղթող ձուկեր են եւ բարեկամ են մարդոց, յատկապէս՝ փոքրերուն:



Ի՞ՆՉ ԿԸ ՓԱՓԱՔԻՄ ԸԼԼԱԼ ԱՊԱԳԱՅԻՆ



ԱՐԵՒԵԼՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱՅՈՒ

Արեւելումի խորհրդատուն ուղղութիւն կու տայ երկրորդական վարժարանի աւարտական դասարանի աշակերտներուն: Ան կը ծանօթանայ աշակերտին նախասիրութիւններուն, տեղեկութիւններ կու տայ ասպարէզներու եւ մասնագիտութիւններու, ինչպէս նաեւ՝ գործի շուկայի մասին:

Արեւելումի խորհրդատուն տեղեակ կ'ըլլայ համալսարաններու մուտքի պայմաններէն, քննութիւններէն եւ կրթանպաստ տրամադրող ֆոնտերէն, ինչպէս նաեւ՝ երկրի մասնագիտացած մարդու յաջանջներէն:

Արեւելումի խորհրդատուն հարցա-

թերթիկներու եւ հանդիպումներու ճամբով կը ծանօթանայ աշակերտին, անոր նկարագրին ու կարողութիւններուն եւ գայն կ'ուղղէ դէպի համապատասխան ասպարէզ: Ան կը լուսաբանէ, կ'ուղղէ եւ երբեք չի պարտադրեր համալսարանական որոշ ճիւղի մը հետեւիլ: Վերջնական որոշումը կը մնայ աշակերտին:

Խորհրդատուն պէտք է հոգեբանի եւ դաստիարակի հմտութիւններ ունենայ. ան պէտք է ըլլայ լաւ լսող, համբերող, տրամադրելի եւ հաղորդական:



ՅԱՆՏԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է: Թուշուն է անբոյն ու թափառական, ո՛չ ձեւ եւ ո՛չ գոյն ունի մշտական:

(Պատասխանը՝ յաջորդիլ: Նախորդ հանելուկին պատասխանն էր վրձին):

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 32ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ

